

Ամերիկացի պաշտօնատարներ երկվ յայտարարեցին, թե Սիէրըլի մէջ ձերբակալած են կասկածելի երկու փաթիտանցիներ, մինչ անոնք կը փորձէին ճամբորդութեան օդանաւի տոմսեր գնել: Նշեալ փաթիտանցիներուն անունները կը գտնուին կասկածելիներու այն ցանկին վրայ, որոնց արգելուած է օդանաւային թռիչքներով տեղափոխուիլ կամ ճամբորդել: Կասկածելիներէն մէկը փորձած է փախուստի դիմել, սակայն ձերբակալուած է:

Քննութիւն բացուած է Միացեալ Նահանգներու մէջ երկու փաթիտանցիներուն կեցութեան շուրջ:

ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻՆ ԼՈՒԾՄԱՆ ԳԾՈԿ

### ԻԼՀԱՄ ԱԼԻԵԻ ՀԱԻՍԱՐԻՄ ԿԸ ՄՆԱՅ ԻՐ ՀՕՐ՝ ՀԱՅՏԱՐ ԱԼԻԵԻ ՌԱԶՄԱՏԵՆՉ ՄՕՏԵՑՈՒՄԻՆ

Այրպէյճանի նորանշանակ վարչապետ Իլիամ Ալիեւ իր առաջին երկարապատում հարցազրոյցը տուած է ռուսական մամուլին: «Իվլէսթիա» թերթին երէկ տրուած հարցազրոյցի մը մէջ Ի. Ալիեւ անդրադարձած է Լեննային Ղարաբաղի տագնապի լուծման հարցին: Հաւատարիմ մնալով այդ ուղղութեամբ իր հօր՝ Ալլախանի նախագահ Ղարաբաղի կարգաւորման շուրջ բանակցութիւններ կարելի է կայացնել: Ասկա միակ ընդունելի ձեւ է, առանց որուն կարելի չէ որեւէ հարցի շուրջ համաձայնիլ: Իլիամ Ալիեւի կարծիքով, մօտ ապագային ամէն հարց պիտի հանգուցալուծուի: «Այրպէյճանի ժողովուրդը պատերազմ

չ'ուզեր: Այրպէյճան կը ձգտի Լեննային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման», նշած է Իլիամ Ալիեւը: «Այնքան ատեն, որ պատերազմը չ'ընդհատուի, որ քոնի ուժով ոչ մէկ տեղ կը հասնի», ըսած է Ի. Ալիեւ, աւելցնելով, որ եթէ առկայ իրավիճակը լուծուի քանակաբար, ինչ որ նշուած է Ղարաբաղի շահաւորը: «Հայաստանի մէջ շահեցաւ մեր հողերը գրաւելով: Հոն ոչ ոք կը բնակի, մերկ հող է, միայն քիմիկան պահակակէտեր հաստատուած են այդ շրջաններուն մէջ», նշած է Ի. Ալիեւ: Այրպէյճանի նախագահութեան թեկնածու Ի. Ալիեւի կարծիքով պատերազմին հետեւանքով վատթարացած է Հայաստանի քաղաքացիներուն կեանքը: «Անոնք այժմ լրի կտրուած են կովկասի պարագանային նախագծերէն: Հայաստան չունի տնտեսական պարագանային հեռանկարներ», յայտնած է ան: Հայաստանի եւ Այրպէյճանի միջեւ

տնտեսական համագործակցութեան կարելիութեան մասին հարցումի մը պատասխանելով Այրպէյճանի վարչապետը յայտնած է. «Այնքան ատեն, որ պատերազմը չ'ընդհատուի, որ քոնի ուժով ոչ մէկ տեղ կը հասնի», ըսած է Ի. Ալիեւ, աւելցնելով, որ եթէ առկայ իրավիճակը լուծուի քանակաբար, ինչ որ նշուած է Ղարաբաղի շահաւորը: «Հայաստանի մէջ շահեցաւ մեր հողերը գրաւելով: Հոն ոչ ոք կը բնակի, մերկ հող է, միայն քիմիկան պահակակէտեր հաստատուած են այդ շրջաններուն մէջ», նշած է Ի. Ալիեւ: Այրպէյճանի նախագահութեան թեկնածու Ի. Ալիեւի կարծիքով պատերազմին հետեւանքով վատթարացած է Հայաստանի քաղաքացիներուն կեանքը: «Անոնք այժմ լրի կտրուած են կովկասի պարագանային նախագծերէն: Հայաստան չունի տնտեսական պարագանային հեռանկարներ», յայտնած է ան: Հայաստանի եւ Այրպէյճանի միջեւ

### ՀԱՅԱՐԱՒՈՐ ՇԻՒՆԵՐ ԿԸ ԲՈՂՈՔԵՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ԴԵՍ

Հայարաւոր շիւներ երէկ հաւաքուած են Պաղատի աղքատ մէկ արուարձանին մէջ՝ Ուրբաթ օրուան յատուկ աղօթքներու համար, դատապարտելով «իրենց հաւատքին դէմ ամերիկեան յարձակումը», մինչ ամերիկեան կարաւաններ երկու անգամ յարձակումի կ'ենթարկուէին մայրաքաղաքին արեւմտեան գօտիին մէջ:

Սատր Սիթիի շրջանին մէջ շէյխ Ապտիլ Հատի Թարաճի աւելի քան 10 հազար հոգիներ հաւաքին յայտնած է. «Չորեքշաբթի օրուան դէպքը ցոյց կու տայ, թէ ամերիկայի յայտնարուին դէմ իրենց կան պատերազմ մըն է»:

Անոնցմէ շատերը իրենց կործանող ծեծած են եւ կարմիր, սեւ եւ կանաչ կրօնական դրօշներ ցոյցարձակուած աշտարակի մը տակ, ուր Չորեքշաբթի օր իրաքցի մը սպաննուած էր, երբ ամերիկեան ուժեր հայարաւոր ցուցարարներու ամբոխի մը վրայ կրակած էին:



Թարաճի դատապարտած է ամերիկեան գլխաւորութեամբ դաշնակից ուժերը, ըսելով, որ անոնք միայն Իրաքի «ոսպարական հարցաւորութեամբ» հետաքրքրուած են:

Սակայն ան իր հետեւողներէն էր էն ինդրաճէ Նորեյէ քայլերու շրջանէլ, բացի թէ կրօնական գերագոյն իշխանութիւնը՝ Հաուկան, թելադրէ ատիկա:

Իրաքի մէջ ամերիկացի ամէնէն բարձրաստիճան բանակայինը՝ Կորալար Ռի-

քարտո Սանչէզ, Հինգշաբթի օր ըսած էր, թէ իր բանակը ներողութիւն խնդրած է շիի կրօնաւորներէն՝ բախումին համար, որ ծայր տուած էր, երբ ամերիկեան ուժեր ուղղաթիռով մը յայտնապէս վերցուցած են հաղորդակցութեանց աշտարակին վերելակէտը ուժերը կրօնական դրօշակը:

Սակայն Սանչէզ պնդած է, թէ ուղղաթիռը անուշադրութեամբ դրօշակը վար առած է (հոգուն պատճառով) եւ թէ քիմիկաները դիտումնաւոր կերպով

չեն ըրած ատիկա: Թարաճի սերտ կապեր ունի Մոքթարա Սատրի հետ, որ ամերիկեան գրաւումին դէմ ամէնէն բացայայտօրէն արտայայտուող շիի կրօնաւորներէն մէկն է: «Մոքթարայի հրահանգին ներքեւ պիտի ապրուած էինք, ինչպէս ըրինք 1922ին», ըսած է կարգ մը հետեւորդներ:

#### ՅԱՐԱԿԱՌՄԵՐ

Պաղատէն արեւմուտք գօտիին մէջ, Շաբ.՝ էջ 10

### ԹԱՅԼԵՆՏԻ ՄԷՋ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԵՑԱԻ ՃԱՄԱՍ ԻՍԼԱՄԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՄՊԱԼԻՆ

Ասիոյ ամէնէն աւելի հետապնդուած անձը՝ Համպալի, որ Պալիի ռմբակարկումներուն ետին կանգնող ենթադրեալ ուղեղն է եւ «Քալիտա» ցանցին ղեկավար Ռուսամ Պըն Լատէնի բարձրաստիճան մէկ դաշնակիցը, Թայլենտի մէջ ձերբակալուած է:

Պաշտպանութեան նախարար Թամարաք Իսարանկըուն Նա Այուրիայ երէկ թղթակիցներու յայտնած է, թէ Համպալի եւ անոր կիներ երկուշաբթի օր ձերբակալուած են եւ Չորեքշաբթի օր Ինտոնեպիոյ յանձնուած՝ գործողութեան մը ընթացքին, որ տեղի ունեցած է «բազմաթիւ երկիրներու գործակցութեամբ»:

Անոնք Մ. Նահանգներու փոխարէն Ինտոնեպիա ղրկուած են, «որովհետեւ ան ինտոնեպիացի է եւ հոն բազմաթիւ ոճիրներ գործած է», ըսած է ան, աւելցնելով, որ Թայլենտ Մ. Նահանգներու կողմէ առաջարկուած 4 միլիոն տոլար վարձատրութիւնը պիտի պահանջէ Համ-

պալիի ձերբակալութեան համար:

Այսուհանդերձ, Ինտոնեպիոյ ընդհանուր ոստիկանապետ Տայ Պալիթար երէկ շեշտած է, թէ Համպալի «տակաւին այլ երկրի մը մէջ» կը գտնուի: Այն հարցումին, թէ արդեօք ան Ինտոնեպիա պիտի բերուի, «ոչ տակաւին», պատասխանած է ան:

Արտաքին գործոց նախարար Հաոսան Ուիրայուտա ըսած է, թէ կ'ակնկալէ, որ ի վերջոյ Համպալի յանձնուի Ինտոնեպիոյ, որպէսզի դատուի:

Թայլենտցի բարձրաստիճան ոստիկանապետ մը յայտնած է, թէ Համպալի շաբաթավերջին Լաուէն Սայլէնտ անցած է՝ սպանական կեղծ անցագիրով մը: Ան ծպտուած է ածիլելով մօրուրը: Պանկըքի օտարաշրջանակներու հարցերու պատասխանատու բաժանմունք փո-



Համպալի

խադրուել էր, ան յանձնուած է «ամերիկեան իշխանութիւններուն եւ ամերիկեան յատուկ թռիչքով մը տարուած»:

Ըստ բանակային բարձրաստիճան աղբիւրներու, Համպալի ձերբակալուած է կեղրոնական Այուրիայ քաղաքին մէջ «առանց դիմադրութեան» եւ «Սի. Այ. Էյ.» զիտակցութեամբ:

Թայլենտի վարչապետ Թաքսին Շինաուարա յայտնած է, թէ Համպալի ձերբակալուած է տեղացի բնակիչներու կողմէ տրուած գողտի տեղեկութիւններէ ետք: Համպալի, որ շրջանային ահաբեկչական

Շաբ.՝ էջ 10

### ԻՍՐԱԵԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՊԵՏԻ ՀԵՌԱՆԱՅ ՉՈՐՍ ՔԱՂԱՔՆԵՐԷ

### ԿԱՅՈՒԹԵԱՆ ՅԱԻԵԼԵԱԼ ԲԱՐԴԱՅՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԵՐԿԱՌՂՄԱՆԻ ՓՈՐՉԵՐ

Պաղեստինցի եւ իսրայէլացի ապահովութեան մարտի պաշտօնատարներ երկվ փորձեցին փարատել նորագոյն յարուածութիւնը՝ ծայր տուած վայրագութեանց «ռաունտ» մը ետք, որ 7 շաբթուան քիմիկանք խախտած է եւ կասեցուցած խաղաղութեան ծրագիրին գործադրութեան համար ի գործ դրուող ձեռքերը:

Ապահովութեան հարցերու պաղեստինցի նախարար Մոհամէտ Տահլանի խորհրդականները յայտնած են, թէ երկու կողմերը նոր բանակցութիւններու պիտի սկսին՝ Տահլանի եւ իսրայէլի պաշտպանութեան նախարար Շաուր Մոֆալի Հինգշաբթի օրուան «դրական» սիւտէն ետք:

Տահլան եւ Մոֆալ աւելի ուշ ունեցան երկրորդ հանդիպում մը, որմէ ետք պաղեստինցի պաշտօնատարներ յայտնեցին, թէ իսրայէլեան բանակը յառաջիկայ երկու շաբթուան ընթացքին պիտի քաշուի պաղեստինեան չորս քաղաքներէ: Նշեալ քաղաքներն են Ռամալլան, Թուլքարաւը, Երիթովը եւ Քալբիլիան:

Իսրայէլ երէկ քանի մը փոքր «ժեպ»եր ըրած է ապտարձակելով, ըստ պետական ձայնասփիւռի՝ պաղեստինցի 76 բանտարկեալներ: Անոնց ապտարձակումը յետաձգուած էր այս շաբաթակիցի անձնասպանական երկու գործողութիւններէն ետք:

Պաշտօնատարներ կը մտածէին նաեւ կարճ ժամանակով ջնջել պաղեստինեան իշխանութեան ղեկավար Եասէր Արաֆաթի Ռամալլայի 19 ամսուան շրջափակումը, որպէսզի կարենայ մասնակցիլ Կապալի մէջ իր քրոջը մահուան սուգին:

Նշեալ քայլերը տեղի կ'ունենային մտավախութեանց մթնոլորտի մը մէջ՝ արիւնահեղութեան նոր ալիքի մը իմաստով, Հեպոնի մէջ Հինգշաբթի օր Իսրայէլեան Ժիհադի տեղական մէկ ղեկավարին իսրայէլեան ուժերու կողմէ սպանութեանէն ետք:

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն իտալական «Լա Ռեփուպլիք» օրաթերթին յայտնած է, թէ իսրայէլ «լիովին յանձնառու կը մնայ ճամբու քարտէսին», սակայն ան դարձեալ կասկած



արտայայտուած է, թէ պաղեստինեան ղեկավարութիւնը կ'առաջադրէ սանձել ծայրայեղականները:

Ան հարցականի տակ առած է պաղեստինցի վարչապետ Ապու Մազէնի կարողականութիւնը՝ անձնասպանական գործողութիւնները կասեցնելու, զգուշացնելով, թէ «քաղաքական որեւէ համաձայնութիւն չի կրնար պարտադրուիլ՝ ահաբեկչութիւնը հանդուրժել շարունակելով»:

Շաբ.՝ էջ 10

«Ազգակ»ի Երեքշաբթի, 19 Օգոստոսի թիւին հեղ կը ստանաք «ԱՆԱՀԻՏ»ի ամրան բացատրիկ յաւելումը:

### ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԱՄԲՈՂՁՈՒԹԵԱՄԲ ՊԻՏԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԻՆ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՀ ԱՀՈՒՏ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երէկ կատարեց շարք մը յայտարարութիւններ, որոնց մէջ շեշտեց, թէ կառավարութեան տուած որոշումները պիտի գործադրուին եւ աւելցուց, որ նշեալ որոշումները գործադրութեան լրջօրէն պիտի հետեւին պատասխանատու մարմինները:

Նախագահ Լահուտ նշեց, որ երկիրը մուտք կը գործէ տնտեսական զգայուն կացութեան շրջան մը: Ան դիտել տուաւ, որ պետական վարչակազմերուն մէջ փոփոխութեան եւ միասնականացման յարաբերութիւն չկայ երբեք:

Նախագահ Լահուտ դիտել տուաւ, որ տնտեսական որեւէ բարեկարգում կը կատարուի միմիայն վարչական բարեկարգումներու ճանքով: Նախագահ Լահուտ իր յայտարարութիւնները երկրպագեց ըսելով, որ կառավարութեան վերջին ժողովին տրուած որոշումը անյայապ պիտի գործադրուի:

### ՊԸՐՐԻ ԵՒ ՀԱՐԻՐԻ ԲՆՆԱԿԵՅԻՆ ՆԵՐԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութեան ու արգելափակումներուն առնչուած հարցեր:

Վարչապետ Հարիրի ընկերակցեցաւ երեսփոխան Պասէմ Սապահ, իսկ հանդիպումին ներկայ գտնուեցան երկրագործութեան նախարար Ալի իսախի, երեսփոխան Ալի Պապի Եւ Սմայլ շարժումի Հարաի կազմակերպական պատասխանատու Ժամիլ Հայէք: Հանդիպումէն ետք վարչապետ Հարիրի նշեց, որ հանդիպումը բնականօրէն ընթացած է եւ անոր ընթացքին քննարկուած են երկրին առնչուող խնդիրներ ու շրջանային իրադարձութիւններ:

Վարչապետ Հարիրի աւելցուց, որ յուրջ քննարկումի ենթարկուած են էլեկտրականութեան տագնապի թղթածրարը, ինչպէս նաեւ կառավարութեան նիստերուն ընթացքին արժարժուած բոլոր հարցերը: Անդրադառնալով հարաւային Լիբանանի կացութեան եւ իսրայէլեան շարունակուող սպառնալիքներուն Հարիրի ըսաւ, որ Պըրրիի հետ քննարկած է նշեալ հարցը, կեդրոնանալով իսրայէլեան օդուծին կատարած վերջին թռիչքներուն եւ սահմանային խախտումներուն վրայ:

Ելեկտրականութեան տագնապի լուծման ի խնդիր, կառավարութեան տուած որոշումներուն ակնարկելով վարչապետ Հարիրի գործակցութեան կոչ ուղղեց եւ շեշտեց, որ էլեկտրականութեան հարկահաւաքը ամէն գնով պէտք է կատարուի:

Վարչապետ Հարիրի յետմիջօրէին մեկնեցաւ Սարտիսիս:

### ՄԱՀԱԶԴ

- Մանուկ, Սիլվա եւ Շոդիկ Կէօզ՝ Կենտրոն
- Տէր եւ տիկին Մանուկ Ֆոնդրլեան եւ զաւակը՝ Վազգէն
- Տէր եւ տիկին Պետրոս Կէօզ՝ Կենտրոն
- Տիկին Թագուհի Կէօզ՝ Կենտրոն
- Տէր եւ տիկին Գրիգոր Շէնեան եւ զաւակուրդ
- Տիար Խոսրով Պէրպէրեան եւ զաւակուրդ
- Տիկին Նազելի Պոյաճեան եւ զաւակուրդ
- Պետրոս, Յակոբ եւ Վարդանուշ Աբրահամեաններ
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, քրոջ, հօրաքրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

### ԱՐԱՔՍԻ ԿԵՕՎՇԵՆԵԱՆԻ (Ծնեալ՝ ՖՈՆԸՂԵԱՆ, 1927ԻՃ)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 15 Օգոստոս 2003, կէսօրէ ետք ժամը 12:30ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ծառաթ, 16 Օգոստոս, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Ատանա թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալին բնակարանը Ծառաթ 16, Կիրակի 17, երկուշաբթի 18 եւ երեքշաբթի 19 Օգոստոսին:

### ՄԱՀԱԶԴ

- Տիկին Ռոզէթ Պօղոս
- Տէր եւ տիկին Ժողէթ Պօղոս եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Ռաիֆ Պօղոս եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Ֆրանսուա Պօղոս եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Ապպուտ Պօղոս եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Նապիլ Պօղոս եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Ժան Պօղոս եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Սուրի Պօղոս եւ ընտանիք
- Տէր եւ տիկին տղթ. Ժան եւ Ժանէթ Տէր Մեքրոպեան եւ ընտանիք
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝

### ԵԱԳՈՒՊ ԵՈՒՍԷՖ ՊՕՂՈՍԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 14 Օգոստոս 2003ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Ուրբաթ, 15 Օգոստոս, կէսօրէ ետք ժամը 5:00ին, Զարթալի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Թահուտի Հայ Կաթողիկէ գերեզմանատունը եւ ամփոփուեցաւ ընտանեկան դամբարանին մէջ:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին, եկեղեցւոյ սրահին մէջ Ծառաթ 16 եւ Կիրակի 17 Օգոստոսին առաւօտեան ժամը 10:00էն երեկոյեան ժամը 8:00:
- ԾԱՆՈԹ: - Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել Զարթալի Ս. Խաչ եկեղեցւոյ:

### ՕՊԷՅՏ - ՇԱԱԹ ԸԱՆԴԻՊՈՒՄ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիքանացիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երէկ Պուսթրոս Օպէյտին մէջ ընդունեց պաղեստինեան իշխանութեան արտաքին գործոց նախարար Նապիլ Շաաթը, որուն հետ քննարկեց շրջանային իրադարձութիւնները, Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը, ինչպէս նաեւ Լիբանանի ուղղուած իսրայէլեան սպառնալիքները:

Հ ա ն դ ի պ ու մ ի ն աւարտին Շաաթ Վոյտը շնորհակալութիւններ արտայայտեց իրադարձութիւններուն ու պաղեստինցիները իրարմէ անջատող փշաքներու վետեղման ցեղապաշտական վտանգներէն եւ աւելցուց, որ ամէնէն վտանգաւորը ամերիկեան քաղաքականութեան եւ արաբական ու իսլամական աշխարհին միջեւ իսրայէլի կողմէ հիւսուող պատեր է:

Շաաթ ըսաւ, որ Պէյրութի մէջ կատարած իր հանդիպումներուն ընթացքին քննարկած է նաեւ պաղեստինեան իշխանութեան վարչապետ Մահմուտ Ապպահի Պէյրութ եւ Գամալի կատարելիք հաւանական այցելութիւնները:

Շաաթ շեշտեց, որ հարկ է Լիբանանի մէջ բնակող պաղեստինցի գաղթականներուն պաշտպանութիւնն ու ապահովութիւնը կայունացնել մինչեւ որ

հիմնուի անկախ Պաղեստինը, մայրաքաղաք Երուսաղէմով, եւ պաղեստինցի գաղթականները կարենան օգտուիլ տունդարձի իրենց իրաւունքին:

Նշեալ յայտարարութիւնները Շաաթ կատարեց լիբանանցի իր պաշտօնակիցին Օպէյտի հետ տուած մամլոյ միացեալ ասուլիսին ընթացքին:

Օպէյտ իր կարգին ընդգծեց, թէ խաղաղութեան ճանքով քարտէսը պաղեստինցիներուն ներկայացուած լաւագոյն առաջարկն է: Ան շեշտեց նաեւ, որ պաղեստինցի գաղթականներու տունդարձի իրաւունքը անպայման պիտի գործադրուի:

Անդրադառնալով պաղեստինեան ինթիֆատային Շաաթ յայտարարեց, որ ինթիֆատան, որ ցարդ տուած է երեք հազար նահատակ եւ 40 հազար վիրաւոր, պաղեստինեան իսրայէլեան մեծագոյն բախումն է թէ իր խլած ժամանակով է թէ՛ արդիւններով:

Շաաթ իր խօսքը եզրափակեց ըսելով, որ պաղեստինցի ժողովուրդին խորհրդանիշները կը մնան գնդացիներն ու ձիերն: «Պաղեստինցի ժողովուրդը անմասայան ժողովուրդ մը չէ, այլ պատագրութեան համար ամէն միջոցի դիմող ժողովուրդ: Անմասպական գործողութիւններ գործող թուրք պաղեստինցիները այդ գործողութիւնները կատարած են շարունակելու համար պաղեստինցի ժողովուրդին պայքարը, հանելու համար արդար ու ամբողջական պատուութեան», նշեց Շաաթ:

### ՀԱԱԹ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՇԵՏ

Միւս կողմէ, Շաաթ երէկ «Քոմսոթ» պանդոկին մէջ զրոյց մը ունեցաւ Լիբանանի մամուլին եւ թղթակիցներուն հետ: Ներկայ գտնուեցան պաղեստինեան տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ նախկին նախարար Պշարա Մըրհէմ:

Շաաթ լրագրողներուն հետ ունեցած իր զրոյց-հանդիպումին ընթացքին կեդրոնացաւ յատկապէս պաղեստինեան իսրայէլեան

տագնապին վրայ: Ան կոչ ուղղեց կապուելու Լիբանան-Պաղեստին-Սուրիա եռակողմանի ճակատ մը եւ աւելցուց, որ յառաջիկայ երկուշաբթի օր հանդիպում պիտի ունենան նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտի հետ, Գամալի կատարելիք իր երկօրեայ այցելութիւնէն ետք:

Շաաթ շեշտեց, որ խաղաղութեան ճանքով քարտէսը պաղեստինցիներուն ներկայացուած լաւագոյն առաջարկն է: Ան շեշտեց նաեւ, որ պաղեստինցի գաղթականներու տունդարձի իրաւունքը անպայման պիտի գործադրուի:

Անդրադառնալով պաղեստինեան ինթիֆատային Շաաթ յայտարարեց, որ ինթիֆատան, որ ցարդ տուած է երեք հազար նահատակ եւ 40 հազար վիրաւոր, պաղեստինեան իսրայէլեան մեծագոյն բախումն է թէ իր խլած ժամանակով է թէ՛ արդիւններով:

Շաաթ իր խօսքը եզրափակեց ըսելով, որ պաղեստինցի ժողովուրդին խորհրդանիշները կը մնան գնդացիներն ու ձիերն: «Պաղեստինցի ժողովուրդը անմասայան ժողովուրդ մը չէ, այլ պատագրութեան համար ամէն միջոցի դիմող ժողովուրդ: Անմասպական գործողութիւններ գործող թուրք պաղեստինցիները այդ գործողութիւնները կատարած են շարունակելու համար պաղեստինցի ժողովուրդին պայքարը, հանելու համար արդար ու ամբողջական պատուութեան», նշեց Շաաթ:

### ՀԸՍ ԿԸ ՔԵՆԱԴԱՏԷ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵԼԱՌՃԸ

Նախկին վարչապետ Էմիլ Հըս երէկ քննարկեց կառավարութեան կողմէ հաշուապահութեան հսկողութեան պակասը, որ հիմնական պատճառն է պետութեան մէջ արանազրուած փոստութեան:

Հըս աւելցուց, որ այս բոլոր տագնապներով հանդերձ կառավարութիւնը ծրագրած է երկուշաբթեայ արձակուրդ մը առնել, առկալելով բազմաթիւ տագնապներու լուծման աշխատանքները:

Հըս ըսաւ, որ Լիբանանի մէջ երէ գոյութիւն ունենար նուազագոյն ժողովրդավարութիւնը, խորհրդարանը կառավարութիւնը կը կանչէր հաշուապահութեան, երկրին մէջ տիրող փոստութեան ու քաղաքացիները ծանր տուրքերով բեռնաւորելու մասին հարցաքննելու համար պայն:

### ԿՈՒԶՈՒԻՆ

Վարչապետ Նուրի Սուրբ (սեւեռ) գործադրեց: Դիմել հեռ. 01-242549:

### ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

Պուրճ Համուտ, 2 սենեակ եւ յարակից մասեր: Ընդ. 03 - 915051:

### ԾԱԽՈՒ 3ԱՐԿԱՐԱԺԻՆ

Ճամբորդութեան պատճառով, Մզիտի սկիզբը, նորակառուց. 160 քառ. մետր, 3 սենեակեակ, հիւրասրահ, ճաշարան, 3 բաղնիք, կեդրոնական էր բոնսիսիոն, ջրհոր, ժնդրաթոք, կառուցում: Գեղատեալի դիրք: Դիմել՝ հեռ. 01-267909:

### ՀԸՋՊԱԼԼԱ ԱՆԴՐՈՒԹԵԼԻ ԿԸ ՄՆԱՅ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՑ

Կ'ԸՍԵ ՔԱՍԵՄ

Հըս պալլայի փոխ ընդհանուր քարտուղար շէյխ Նայիմ Քասէմ երէկ ձայնասփիւռի «Նուր» կայանին հետ ունեցած հարցազրոյցի մը ընթացքին շեշտեց, որ Հըս պալլա երբեք չ'ընդունիր տկարանալի դէմ իսրայէլեան սպառնալիքներուն:

Ան շեշտեց, որ Հըս պալլա փաստօրէն մտահոգ չէ եւ անվախ է ու լուրջ, աւելցնելով, որ այս է Հըս պալլայի ներկայ իրականութիւնը եւ եթէ այս կեցուածքը կամ իրողութիւնը մագլցողական քայլ կը նկատուի, ապա կ'արժէ ըսել, թէ այդպէս մտածողները չարաչար կը սխալին:

Քասէմ ընդգծեց, որ Մապաթի Շըպաա կ'իյնայ իրականեան հողերու սահմանին մէջ եւ Հըս պալլա մինչեւ արեան իր վերջին կաթիլը պիտի պայքարի պատագրելու համար պայն եւ վերջ դնելու Լիբանանի հետ իսրայէլեան սահմանային կայունութեան խախտումի փորձերուն, որոնք կը կատարուին իսրայէլի կողմէ, այսուհանդերձ ՄԱԿի եւ այլ ուժերու կողմէ միջոց վերագրուին Հըս պալլային:

Անդրադառնալով ներլիբանանեան կեանքին առնչուող հարցերուն Քասէմ յատկապէս կեդրոնացաւ տնտեսական ցուալի եւ ողբերգական կացութեան վրայ, դիտել տալով, որ հարկ է վերջ տալ փոստութեան, էլեկտրականութեան մարտի պատասխանատուները կանչել հաշուապահութեան եւ օրինական ձեւերով կիրարկել էլեկտրականութեան հայթայթման արդար հարկահաւաք:

### ՖԱՏԼԱԼԼԱ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՌՈՒՇԻՆԿԹԸՆԻ ԿՈՂՄՆԱԿԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հըս պալլայի հոգեւոր պետ Մոհամէտ Հիւսէյն Ֆատալլա երէկ Ուրբաթ օրուան իր քարոզին մէջ շեշտեց, որ Միացեալ Նահանգներ կը դատապարտեն պաղեստինեան ինթիֆատային կողմէ իսրայէլեան բռնարարներուն տրուած պատասխանները, քանի որ նկատուելի ահաբեկչական եւ պատճառաբանելով նշեալ գործողութիւնները կը փորձեն պատճել պաղեստինեան իշխանութիւնը:

Ֆատալլա աւելցուց, որ Ուաշինկթըն երբեք չէ դատապարտած պաղեստինցի ժողովուրդին դէմ իսրայէլեան բռնարարները, այլ բաւարարուած է ըսելով, որ երկու կողմերը՝ Պաղեստինն ու Իսրայէլ պէտք է համաձայնին խաղաղութեան ճամբով քարտէսի գործադրութեան: «Ուաշինկթըն կ'աւելցնէ, թէ հարկ է «քալել» ինթիֆատային կազմակերպութիւնները, որովհետեւ անոնք են, որ կը խոչընդոտեն խաղաղութեան գործընթացը», ըսած է Ֆատալլա:

Անդրադառնալով Լիբանանի մէջ տիրող պետական եւ տնտեսական փոստութեան, Ֆատալլա շեշտեց, որ վարչական փոստութիւնը արդիւնք է քաղաքական փոստութեան:

### ՏՕՆ ՎԵՐԱՓՈՒՄՆԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՎԾԱԾՆԻ ԵՒ «ՈՒՍՏԻ ՕՐ» ՊԻՔՅԱՅԱՅԻ

Ի գիտութիւն մեր սիրելի հաւատացեալ ժողովուրդին կը յայտնենք, թէ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, Պիքֆայայի Ուխտի Օրը պիտի կատարուի այսօր՝ Շաբաթ, 16 Օգոստոս 2003ի երեկոյեան:

Այս առիթով պիտի կատարուի Սուրբ պատարագ Ս. Աստուածածնի մատարան շրջապակին մէջ: Արարողութեանց պիտի նախագահէ եւ ժողովուրդին իր պատգամը պիտի փոխանցէ՝

### Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ

Պիտի պատարագ՝ ԳԵՐՇ. Տ. ԵՓՐԵՄ ԱՐԸ. ԹԱՊԱԳԵԱՆ

Ժամերգութիւն՝ երեկոյեան ժամը 6:00ին  
Ս. պատարագ՝ երեկոյեան ժամը 7:30ին

Յաւարտ Սուրբ եւ անմահ պատարագի, պիտի կատարուի խաղողի եւ մատաղի օրհնութիւն, համըհսպետութեամբ վեհափառ հայրապետին:

- Այս հոգեպարար առիթով, մեր հաւատացեալ ժողովուրդին Պիքֆայայ երթեկի դիրութիւն ընտելու համար յատուկ օթոպիսներ պիտի տրամադրուին հետեւեալ վայրերու մէջ.
- Ս. Վարդանանց եկեղեցւոյ դիմաց
- Ս. Աստուածածնի եկեղեցւոյ դիմաց
- Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցի
- Ս. Յակոբ եկեղեցւոյ դիմաց
- Ֆանար՝ ակումբին առջեւ եւ Ռաուտա
- Ս. Սարգիս եկեղեցւոյ կից
- Անթիպաս՝ Սիմիթեան շէնքեր
- Ս. Բառասնից Մանկանց եկեղեցի

Օթոպիսները պիտի սեկնին երեկոյեան ժամը 5:00ին եւ պատարագ պիտի ըլլան ժամը 10:00ին մեր ժողովուրդը վերադարձնելու Պէյրութ:

Կոչ կ'ուղղենք հաւատացեալ մեր ժողովուրդին, օրուան խորհրդով ու պատգամով զօրացած ուխտի գայ Պիքֆայայի Ս. Աստուածածնի մատուղ վերանորոգելու դարեր առաջ Աստուծոյ հետ կնքած իր ուխտը:

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ



ԱԿՆԱՐԿ

ԽՆԴՐԱՆՔ ՄԸ՝ ԽԱԶԲԱՌ ՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԷՆ

Խաչբառ լուծելու մասին քանի մը կարծիք արտայայտելու նպատակ ունի այս ակնարկը: Ըսենք ակնարկը, թե խաչբառը ստեղծում է բառապաշարը գործարարելու, տուեալ լեզուին անծանօթ բառերը սորվելու, նաև՝ ժամանցի համար: Ընթերցողներ կան, որոնք միայն խաչբառ լուծելու համար թերք կը գնեն: Թեև քիչ է թիւը նման ընթերցողներու, բայց կա՝ նախապէս:

Ընթերցողներ ալ կան, որոնք խաչբառին բնակ չեն մօտենար հետաքրքրութեան պակասէն, լեզու չգիտնալու պատճառով կամ ժամանակի չգոյութեան համար:

Խաչբառ լուծողը հոգեկան գոհունակութիւն կ'ունենայ, թէ կրնայ հասկնալ իմաստը բառակուսիներուն մէջ պահուած բառերուն, որոնց վերծանումը հաճոյք կը պատճառէ:

Ընդհանրապէս լեզուին քաջամօթ ընթերցողը համարձակութիւնը կ'ունենայ մօտենալու խաչբառի սինակիւն: Միւս կողմէ, կան լաւ հայերէն գիտցող ընթերցողներ, որոնք նոյնիսկ չեն գիտեր սեւ ու ներմակ բառակուսիներուն դերը ու պաշտօնը ու կը հարցնեն:

Ի՞նչ պէտք կը լուծեն խաչբառը: Գոհացում կու տաս իր հետաքրքրութեան, բայց ոչինչ կը հասկնայ բացատրութիւններէն. այդպիսիներուն համար մամուլին մէջ տպուած խաչբառները անելորդ քանակ են:

Խաչբառի մասնագէտ լուծողները դժգոհութիւն մը ունին, սակայն. ներկայացուած խաչբառներուն մէջ կը հանդիպին այնպիսի բառերու (հայերէն խաչբառներուն կը վերաբերի մեր խօսքը), որոնց գոյութեան ոչ թէ տեղեկ չեն, այլ բառարաններու մէջ եւս ներկայութիւն չեն անոնք: Անիմաստ, շինծու եւ ոչ պիտանի բառեր, որոնք պարզապէս տեղ կը գրաւեն, դուրս եկն հոն կարծեք անկարելի պարագայի մը՝ բառակուսիները դատարկ չօգելու համար:

Քանի մը օրինակ յարմար կը նկատենք իրբեւ վկայութիւն. ի՞նչ կը նշանակեն հետեւեալ բառերը, գորք քաղած ենք վերջին օրերուն լոյս տեսած խաչբառներուն ցանկէն. անմտառու, ալարիք, աշտոյց, քաջայոյս, պանաւամիտ, բնածիր, գեան, աղափ: Պահ մը նկատի առնենք եւ ընդունինք, թէ ասոնք հայերէն բառեր են, բայց կարիքը կա՞յ արդեօք «արեւ չտեսած բառեր» օգտագործելու եւ գտնելու ներկայացնելու իրբեւ գիտեր: Բառեր ալ կան, որոնք լեզուի վրայ կու գան հազիւ մէկ անգամ՝ կեանքի մը ընթացքին: Բառեր ալ կան, որոնք ակնցի խորք կու գան: Կայ նաեւ բառ մը՝ ԱՍ, գոր կ'օգտագործէ խաչբառ պարաստողը, որ գայն անուանած է բոքրախաչի քարտերէն մեկուն մէկնցը: Հոս նշենք նաեւ, որ կենսաբանական հոմանիշը ԱՊՈՒՄ չէ...

Ըսենք նաեւ, որ այնքան ալ դիրքին չէ խաչբառ կազմելը, պարտաստելը. կը կարօտի ժամանակի եւ բառագիտութեան: Գիտակցելով այս դժուարութեան՝ պիտի խնայենք խաչբառի վարպետներէն ըլլալ ԲՆԱԿԱՆ, տեղ չտալ ինքնահնար բառերու, որպէսզի շփոթի չմատուցին խաչբառ լուծող «ամաթոր»ները:

Քննադատութիւն չնկատուի մեր մատնանշումը, այլ՝ խաչբառ լուծողներու կողմէ ներկայացուած խնդրանք:

Խաչբառ լուծողը ամենայն հանդարտութեամբ պէտք է ամբողջացնէ լուծումի աշխատանքը եւ ոչ թէ կիսատ բողո գայն՝ շղայնութեամբ մէկ կողմ նետելով թերթը...

ԱՔԱՍԻԱ

ԲԱՄԲԱՍԱՂՆՔ, ԹԷ ԲԱՆՆ ԱՍԱՆԿ

Օտար վարժարանի մը մէջ պաշտօնավարող ուսուցչուհի մը սրտցաւ արտայայտութիւն մը կ'ունենայ հայ մօր մը:

Ինչո՞ւ օտար գաւակները հայկական վարժարան չէք ուղարկել: Գիտե՞ք՝ ինչպիսի դժուարութեան կը մատուցին անոնք, այդ մանուկները, պատանիները: Առաջին տարին մանուկանդ, լուսնէն ինկածի պէս բամ կ'ըլլան: Խեղճները կը նիհարեն, կը գունատին, հոն խօսուած լեզուներէն ոչ մէկը կը հասկնան, բոլորովին օտար ու խորթ միջավայր մը՝ իրենց համար: Սիրտս կտոր կտոր կ'ըլլայ: Որքան որ գիտեմ, դուք հայկական դպրոցներ ունիք: Մեղքեք այս երեխաներուն... Ձանոնք պահեցէք իրենց հարազատ միջավայրին մէջ:

\*\*\*

Լիբանանահայ բեմերու վրայ շերտօրէն ծափահարուած դերասան-դերասանուհիներ իրենց կարգին տուած են Լիբանանի մէջ տիրող անգործութեան ալիքէն, տնտեսական տագնապէն: Ուրեմն, որքան նիշդ ու նշմարիտ է «կեանքը քատրոն է, քատրոնը կեանք» իմաստուն խօսքը:

Մեր դերասանները կը տուայտին ամէն օր իրենց մորթին վրայ կրելով խաչքող կատակերգութեան եւ սպաննող ողբերգութեան ապրումած ցանկը:

Ո՞վ պիտի հասնի բուժիչ դարմանումի...

ՄԵՒՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ԸՆԴՄԵՉԷՆ

Կիրակի 10 Օգոստոս 2003ի իր թիով յունական «Թօ Կիմա» օրաթերթը լրացուցիչ պրակով մը կ'անդրադառնայ Մեւրի (1920) եւ Լօզանի (1923) դաշնագիրներուն: Պատմական բնոյթի լուսանկարներուն համար, մեր պաշտօնակից «Ազատ Օր»-ը արագ ակնարկ մը կը նետէ յունական օրաթերթի պրակին: Ստորեւ կու տանք այս շատ շահեկան հրապարակումը:

10 Օգոստոս 1920ին Ֆրանսայի մայրաքաղաք Փարիզի արուարձաններէն Մեւրի պալատին մէջ ստորագրուեցաւ համաձայնագիր մը՝ 22 ամսուան ուշացումով: Ուշացման պատճառը Իտալիան էր, որ ստորագրութիւնը կը դանդաղեցնէր պատրաստ չըլլալուն պատճառով: Շահագրգիռ երկիրները առաւելագոյն եռանդով լծուած էին սոյն դաշնագիրին ճամբով աշխարհագրական օգուտներ քաղելու ակնկալութեամբ: Փաստօրէն Մեւրի մէջ հողային բաժանումի ժամը հասած էր: Հոն ներկայ էին 18 երկիրներու ներկայացուցիչներ: Յունաստանի կողմէ՝ նոյնինքն վարչապետ էլեֆթիմիոս Վենիզելոս, Հայաստանի կողմէ՝ Հայկական պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեան:

Մեւրի դաշնագիրը փաստօրէն բաժան-բաժան կ'ընէր Օսմանեան կայսրութիւնը: Յունաստանը եւ Հայաստանը գլխաւոր այն երկիրներն էին, որոնք իրենց պատմական հողերուն վերադարձը կը պահանջէին: Մեծ երկիրները այս գործընթացին մէջ թոյլատու եղան այնքան, որքան ժամանակի իրենց շահերը կը պահանջէին: Սակայն, սուլթաններու բռնատիրութեան տակ դարերով գերեզմարուած ժողովուրդները կ'ուզէին ձեռքբերել սուլթանական բռնատիրութենէն եւ իրենց անկախութեան տիրանալ:

Մեւրի դաշնագիրին ստորագրութիւնը տեղի ունեցաւ Մեւրի ալարանքի յանձնապահեալ համարաւոր սրահին մէջ: Բնական կարգով սրահ մուտք գործեցին երկիրներու ներկայացուցիչները, իսկ սրահ վերջին մուտք գործողը եղաւ Ֆրանսայի նախագահ Ա. Միլլերան: Կը բացակայէին թուրք ներկայացուցիչները, որոնք ապարանքի դահլիճին սեմին կը սպասէին՝ ժողովարար հրահրուելու համար: Նախագահի ցուցմունքին վրայ հրահրուեցան նաեւ անոնք, որոնք մուտքը բարձրաձայն յայտարարուեցաւ՝ «Օսմանեան կայսրութեան պարտնալք ներկայացուցիչները մուտք կը գործեն գահի՞ն»: Անոնք զգեցած էին կարծիք ֆէսեր: Բարեկեցին ներկայ պատուիրակութիւններուն եւ տեղ գրաւեցին Յունաստանի ներկայացուցչութեան կողմէն: Ապա՝ նախագահ Միլլերան խօսք առնելով յայտարարեց. «Պարտնալք, կը յայտարարեմ թէ բոլորին կեցուածքները արտայայտող դաշնագիրը պիտի ստորագրուի»: Ուրի կանգնեցաւ ձեռնկոտական ու զօրավար Համիտի Փաշան, ձեռնկոտական Ռոզա Ռուֆիք պէյ եւ Ռեշատ Նալը պէյը, որոնք հաստատ քայլերով ուղղուեցան դէպի կեդրոնական բոլորածէ սեղանը, ուր գետեղուած էր դաշնագիրը: Անոնք ջղագրգիւ շարժումներով ստորագրեցին, եւ ապա՝ վերադարձան իրենց տեղերը:

Յաջորդաբար դաշնագիրը ստորագրեցին Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, Իտալիա, Ճապոն, ապա Հայաստանի կողմէ՝ Աւետիս Ահարոնեան:

ՄԱՎՈՐՁ ՎԵՆԻԶԵԼՈՍԻ ԳԵՄ

Մեւրի յունանպատ դաշնագիրի ստորագրութենէն երկու օր ետք, երբ վարչապետ էլեֆթիմիոս Վենիզելոս կը պատրաստուէր Փարիզի երկաթուղային Յունաստան վերադառնալ, երկու մեկուսացած զինուորականներու կողմէ իր դէմ մահափորձ կատարուեցաւ: Վենիզելոսը մահափորձէն փրկուեցաւ թեթեւօրէն վիրաւորուած: Յունաստանի պառակտումը սկսած էր: 1 Նոյեմբեր 1920ին տեղի ունեցած ընտրութիւններուն վենիզելոսը չյաջողեցաւ երեսփոխան ընտրուիլ: Հակավենիզելոսեան ընդդիմադիր շարժում մը իշխանութեան գլուխ եկաւ, Քոնստանթինոս թագաւորը մէկ ամիս առաջ մահացած Ալեքսանտրոս թագաւորը փոխարինելով վերատիրացաւ իր գահին: Վենիզելոս հիասթափած օրուան քաղաքական իրավիճակէն, հեռացաւ քաղաքականութենէն եւ ինքնաքստրեալ վիճակի մը մէջ ապրեցաւ արտասահման:

ՓՈՔՐ ԱՍՈՅ ԱՂԵՏԸ

Նոյն ժամանակաշրջանին ողբերգական իրադարձութիւններ տեղի կ'ունենային Թուրքիոյ ներքին ճակատին վրայ: Թուրքիա վիրաւորուած ու նսեմացած էր իր պարտութենէն: Ահա, այսպիսի միտոլոգիայի մը մէջ իշխանութեան գլուխը եկաւ փառասէր եւ արթնամիտ սպայ մը, որ կը շատկանչուէր իր վճռականութեամբ: Մուսթաֆա Քեմալը, որ ապագային անուանուեցաւ Աթաթիւրք: Քեմալ յեղափոխութիւն հռչակեց, առաջնայ կառավարութիւն կազմեց, գահընկէց ըրաւ սուլթանը եւ հռչակեց Թուրքիոյ հանրապետութիւնը: Վերակազմեց



բանակը եւ հալածեց Փոքր Ասիա արշաւած յունական բանակը, որ նահանջեց դէպի Իզմիր եւ Իզմիրի հրկիզումով՝ 1922ի Օգոստոսի վերջաւորութեան հեռացուեցաւ Թուրքիայէն՝ քաղաքուած վիճակի մէջ: Տեղի ունեցած էր արդէն Փոքր Ասիոյ աղէտը:

Թուրքիոյ նոր իշխանաւորները մերժեցին ճանաչել Մեւրի դաշնագիրը եւ ուզեցին ձեռնարկել նոր բանակցութիւններու: Համաշխարհային առաջին պատերազմին յաղթողներուն հետ: Դաշնակից ուժերը չկրցան մերժել: Ասոնց կարգին չկրցաւ մերժել նաեւ Յունաստանի վարչակարգը, որուն իշխանութեան գլուխը կը գտնուէր Սեպտեմբեր 1922ին հաստատուած զինուորական յեղափոխութեամբ կառավարութեան տիրացած զօրավար Նիքոլաոս Փլասթիրաս եւ Սթիլիանոս Զոնաթաս: Այս երկուքը դիմեցին ինքնաքստրեալ էլեֆթիմիոս Վենիզելոսին, որ վերադառնայ Աթէնք:

ԼՕՁԱՆԻ ԴԱՇՆԱԳԻՐ

24 Յուլիս 1923ին, գուլիցերիական Լօզան քաղաքի համալսարանի հանդիսարանին մէջ լուծուած պիտի գտնէին օրուան իրադարձութիւններու եւ նոր դատարաններուն լոյսին տակ տեղի ունեցած քաղաքական վերափոխումները:

Խաղաղութեան հինգերորդ դաշինքը պիտի ստորագրուէր «փոխադարձ ու սրտբաց համախոհութեան» միջնորոտի մը մէջ: Ընչու՞մնե՞րու եւ համաձայնութիւններու իրբեւ արդիւնք՝ դաշնագիրը ստորագրեցին յաղթողները եւ պարտուողները:

Մուսթաֆա Քեմալ պատմական քաղաքական պահանջներով իր պայմանները դրաւ, որովհետեւ նաեւ կը խօսէր մեկնելով յունական բանակը պարտութեան մատնած եւ փայլուն հռչակի արժանացած տիրապետող իր ներկայութենէն ու անհատականութենէն:

Քեմալ «փաշան» (այսպէս կ'անուանէին զինք) այլեւս տէրն ու տիրական էր նոր Թուրքիոյ, որ չէր ճանչնար Մեւրի դաշնագիրը եւ Լօզանի դաշնագիրով կը հիմնէր նոր, ուժեղ եւ անկախ մահափորձի երկիր մը, որ իր կապերը չէր խզեր Եւրոպայի հետ ու Թուրքիան կ'օգտագործէր իրբեւ այդ ցամաքամասի կամուրջը:

Ոմանք գոհ էին, շատեր դժգոհ: Վնասով ելլողներու կարգին կը գտնուէին Յունաստանը եւ Հայաստանը:

Լօզանի դաշնագիրին պաշտօնաբար նետուած էր արդէն 8 Նոյեմբեր 1921ին: Այս դաշնագիրի նախագահութիւնը ստանձնած էր Զուլիցերիոյ համադաշնակցութիւնը: Ֆրանսայի ներկայացուցչութիւնը կը ղեկավարուէր Փուանթարէի կողմէ, անգլիականը լորտ Քորգոնի, իտալականը՝ Մուսոլինիի, որ հազիւ երեք շաբաթ առաջ ստանձնած էր իտալիոյ վարչապետութիւնը: Հոս եւս Յունաստանը կը ներկայացուէր էլեֆթիմիոս Վենիզելոսի կողմէ, այսինքն՝ այն անձնէն, որ իրբեւ վարչապետ քանի մը տարի առաջ ստորագրած էր նոյնինքն Մեւրի դաշնագիրը: Կրետացի այս յանդուգն, խնձմ, համբերատար քաղաքագէտին շնորհիւ Յունաստան յաջողեցաւ փրկել ինչ որ իրեն համար պատմականօրէն կորսուած կը նկատուէր:

Մեւրի դաշնագիրէն մինչեւ Լօզան շատ բան փոխուած էր նաեւ մեծ ուժերուն մօտ՝ փոքր երկիրներու նկատմամբ: Անգլիոյ եւ Ֆրանսայի յարաբերութիւնները շատ հաշտ էին, իտալիան կը ներկայանար ֆաշիական նոր դիմագրիծով. այս ներքին տարբերութիւններէն կը փորձէր օգտուիլ Թուրքիան՝ ներկայացնելով այլամերժ նոր դիմագրիծ մը, որ կը ներկայանար իսմէթ ինէօնիլի անհատականութեամբ՝ վայելելով նոյնինքն Քեմալի զօրակցութիւնը:

Լօզանի դաշնագիրով Յունաստան կորսնցուց Արեւելեան Թրակիան եւ իր սահմանները ճշգրտեցան մինչեւ էվրոս գետը: Կորսնցուց իմվրօ եւ Թենեսօ կղզիները, ինչպէս նաեւ՝ Իզմիրը:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՊՐՈՑՆԵՐՈՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հովանաւորութեամբ Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Գեղամ եպ. Նաչբենի եւ կազմակերպութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կիրակնօրեայ դպրոցներու վարիչ տնօրէնութեան, Լիբանանի Հայոց Թեմի կիրակնօրեայ դպրոցներու աշակերտութեան առաջին համագումարը տեղի ունեցաւ 7-10 Օգոստոսին «Թռչնոց Բոյն»ի մէջ:



Հինգշաբթի, 7 Օգոստոսի երեկոյան ժամը 7:00ին, տեղի ունեցաւ համագումարին բացումը: Կիրակնօրեայ դպրոցներու վարիչ տնօրէն Մաշտոց վրդ. Չոպանեան իր բացման խօսքին մէջ անդրադարձաւ համագումարին նպատակին՝ ըսելով. «Այս համագումարին դուք սորվելիք մը ունիք, եւ վերադարձին ձեր սորվածը պէտք է փոխանցէք ձեր ընկերակցին»: Ապա տեղի ունեցաւ ընկերային հաւաք եւ ծանօթացում: Ուրբաթ, 8 Օգոստոսի

առաւօտեան աղօթքէն թեմի ունեցաւ պատարագի երգեցողութիւն՝ նոյններն էին վերջին խորհրդակցութեամբ Հրայր Դեմիրճեանի: Դասախօսութեան յաջորդեցին պատարագի բացատրութիւն, զարգացնելու մարտնչական զանգուարիչն հաւաք:

Կէսօրէ ետք յայտարարուեց արտոյտով, երեկոյան աղօթքով, պատարագի բացատրութեամբ եւ տեսաբանի ցուցադրութեամբ: Շաբաթ, 9 Օգոստոսին, յայտարարուեց կ'ընդգրկէր առաւօտեան աղօթք, պատարագի երգեցողութիւն եւ ձեռնալին աշխատանք: Կէսօրէ ետք տեղի ունեցաւ դասախօսութիւն՝ զորոյ «Առողջապահութեան կիրակի, 10 Օգոստոսին, համագումարին մասնակիցները ուղղուեցան Ժիւնիէի Ս. Յարութիւն եկեղեցի, ուր կատարեցին պատարագի երգեցողութիւնը:

ԿԻԹԱՌԻ 3ԱՏՈՒԿ ԳԱՍԵՐ Սուլֆօ Եւ Թոքի: Ետ. 03 - 709356:

# Գրական Էջ

## ԱՐԴԱՐ ՍՊԱՍՈՒՄ

Եթե պահ մը ընդունինք, որ գրականության անդատանքն ենթա նոր մուտք գործող իւրաքանչիւր բանաստեղծի առաջնահերթ նպատակներէն մէկը իր սեփական դիմագիծի եւ ինքնուրոյն ձայնի փնտռութիւնն է, կրնանք ըսել, որ իրենց երկրորդ հատորով վերջերս հրատարակ իջած Նուշիկ Միքայելեան եւ Տիգրան Գաբրիելեան, ինչպէս նաեւ իր քերթողական երախտարար ընթերցողին դատաստանին յանձնած Յակոբ Նալպանտ (աւագանի անունով) Յակոբ Տլուխեան) յաջողած են իրենց մեկնակետին մէջ: Նոր եւ ինքնատիպ խօսքով ներկայացնող անվիճելի նախապայման է, որուն անպայմանօրէն պէտք է յաջորդէ դիմագիծի բերեղացման եւ քերթողական ձեռագիրի մաքրագուման տրամաշարժի միջոցով, որ կ'ենթադրէ հետեւողական ճիգ, գրական յարատեւ կենսափորձ եւ ինքնադիման ամենօրեայ ծրագիր:

Ընթերցողին ուշադրութեան յանձնուող Նուշիկ Միքայելեանի «Քամիներէն այնկողմ», Տիգրան Գաբրիելեանի «Անմաս» եւ Յակոբ Նալպանտի «Արուարձանի ձայնացողներ» քերթողագիրքերուն առիթով նոյն հաստատուում կարելի չէ կատարել:

Արեւելահայերէնով արտայայտուող Նուշիկ Միքայելեանի եւ Յակոբ Նալպանտի մօտ երէ զգալի է քերթուածը իր բերեղացած մակարդակին բարձրացնելու ստեղծագործական ճիգը, Տիգրան Գաբրիելեանի պարագային մեզի յանձնար կր հրամայելի անտաշ եւ խոն խօսքի ամբողջութիւն մը, որ բանաստեղծական դիմակներ մատենով հանդերձ յորդահոս լաւայի մը պատկերով կը ներկայանայ եւ հետեւաբար կը կարօտի լուրջ վերամշակման: Անկեղծութիւնը, պատկերաւոր մտածողութիւնը, իմացական ախորժակները, խոհափիլիսոփայական տրամադրութիւնը, համարձակութիւնը եւ արդի քաղաքներու ժխտի մէջ կորսուած մարդ փնտռելու ճիգը ողջունելի առանձնայատկութիւններ են: Անկասկած: Ասոնք յուսարող փաստեր են: Ո՛չ մէկ տարակոյս: Մեր փնտռածը, սակայն, միայն ասոնք չեն, այլ իր քերթողական գտարանէն անցած, խիտ ու բերդարկան այն յղացում-

ներն են, որոնց կարելի է հանդիպել բանաստեղծական ծրագիրներու կողքին, այլին եւ եսին միջեւ իր մասը, այսինքն՝ տառապանքին երգացումը դարպասող այս շնորհալի երկտասարդին հատորին մէջ:

Քաղաքային նոյն մթնոլորտը, սփիւռքեան հոգեբանութիւնը, սիրոյ բուխ պոռթկումները, յիշողութեան խորերէն բարձրացող աղաղակները եւ մա՛նաւանդ այնպէս ներշնչարեւ մը ժայթքած «պոետիկ» գուսպ վիճակները այն գլխաւոր թելերն են, որոնք կը հիւսեն Յակոբ Նալպանտի ուշագրաւ պատկերամտածողութեամբ հարուստ բանաստեղծութիւնները: Արդի քերթողութեան բարեբար անդրադարձներով հարստացած, ընթերցողէն մասնակցութիւն պահանջող կուռ ու պատկերաւոր յղացումներ են հինգ բաժիններով մեզի ներկայացող «Արուարձանի ձայնացողներ»ը, ուր ապականած աշխարհի կեղծիքին դէմ բարձրացող պոռթկումներուն եւ երբեմն նոյնիսկ անյոյս դրսեւորումներուն կողքին կը պայծառանայ սիրոյ թախիծը, բանաստեղծ մարդու անմար տառապանքը եւ ցաւէն թեւաւորուած բանաստեղծական առիճընդ թռիչքը:

Հարուստ բառապաշարով եւ նոյնքան ուշագրաւ ձեռագիրով իր ինքնուրույնութիւնը ամրագրող քերթողագիրք մըն է նաեւ Նուշիկ Միքայելեանի «Քամիներէն այնկողմ»ը: Տարբեր խմորի տեր, նուրբ, քնքոյշ, քափանցիկ եւ քնարաշունչ սիրերգակ մըն է արեւմտահայ եւ արեւելահայ դասական սիրերգակ բանաստեղծներու շունչով ու երանգներով իր յուզաբարձր ձայնը բերեղացուցած Նուշիկ Միքայելեան, որուն կապոյտ ապրումներուն արշալոյսներով ու մշուշներով պարուրուած երգերը ընթերցողին ներքին աշխարհէն ներս կը թափանցեն իրենց բարախուս շերտութեամբ, քաղցրայտ թարմութեամբ եւ վերասույց թելադրականութեամբ կը դառնան «քամիներէն այնկողմ» ծաղկող սիրոյ տաղեր:

Կողք կողքի հրամցուած եռագոյն տաղարաններ՝ որոնց երեք հեղինակներէն աւելին ակնկալելու արդար իրաւունքը ունինք: Կը սպասենք:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

## «ԱՆՄԱՍ»

### ԱՍՏՅՈՒԱԾՔ ԼԵԶՈՒԷ ՄԸ

Սեղանէս չէմ կրնար հեռանալ,  
տունէս չեմ կրնար հեռանալ,  
բաղանաւս,  
տեղէս,  
քաղաքէս,  
երկրէս,  
ետքը ի՞նչ պէս  
այդպէս արագ,  
չինչ շուքի պէս,  
պիտ հեռանամ աշխարհէն:

### ՏՐՏՈՒՆԶՔ

Կեանքս դարձած է մաշուած հին երապ,  
երպներու մէջ մինակ ու անկար,  
կը նայի խոհուն պատմութեան լուռ,  
պագու մներ են անտաշ ու ցանցառ,  
քար արքառ դիպուած ապրելու տեսքեր  
չունին ոչ մէկ ձեւ չունին հրաշքներ  
լոկ ժամանակ են պոկուած Աստուծէ:  
Օհ, ի՞նչ դժուար է ապրիլ անդադար,  
միայն ու միայն մէջը մէկ մարդու,  
մէկ սրտով, մտքով, մէկ հոգուով արդար:

### ՄԱՍՈՎ

Պարտէպին մէջ,  
շրջագիծին վրայ,  
ուր մարդիկ կը ձենեն,

իրենցմէ անդին,  
իրենցմէ հեռու,  
կը հալի իսպ մը անհուն  
կոչուելով՝  
սպասում, վէրք, անմասութիւն:

\*\*\*  
Մա՛ մինս առեր տարեր են,  
Տուն ս առեր տարեր են,  
Շէնք. Կռեր տարեր են,  
Թաղս առեր տարեր են,  
Քաղաքս հին տարեր են,  
Երկիրս սուրբ տարեր են,  
Չեղածներն ալ տարեր են,  
չեմ գիտեր ո՞ւր կամ որո՞ւ...  
բայց տակաւին են հո՞ւս եմ,  
երեւի այդ...  
երեւի այդ մոռցեր են...

\*\*\*  
Այս վայրկեանին կը հեռանայ մէկն  
անվախ  
ու կը թօթովէ «Ես ապրիլ կ'ուզեմ,  
ես խնդայ կ'ուզեմ, ես մնալ կ'ուզեմ,  
ես խաչել կ'ուզեմ հոգին մեկնումին.  
գալս իմ շիղով շօշափել կ'ուզեմ,  
կեանքիս պայտումը ես գրկել կ'ուզեմ,  
նահատակուելով յարութիւնս կեանք,  
բիբերուս յոյսով ես ներկել կ'ուզեմ»:

## ԱՆԷ

Վայրկեան մը կանգնեցէք,  
ի յիշատակ հոգու ընթացքին:  
Մուտք գործեն ձեր մէջ ու մասնատեն հասկացողութիւնը,  
դուրս գալու խոստումը մոռնալով:  
Ո՞վ ենք մենք կուտակուած ու կուտակուած,  
հողեղէն եւ անյագ,  
մոռցանք վերլիշել - ե՞րբ պարեցինք իրար հետ,  
ե՞րբ ունեցանք կրկնութեան պատկերներ:  
Կը սպառի՞ սակարանը մեր փորձութեան  
մաքրելով ծնունդը իր հաշտութենէն,  
կը ծփա՞յ աւետումը այս խորթութեան  
մկրտելով գիտութիւն ու արհաւիրք:  
Կային դափնեպսակներ ետքը շրջիկներ,  
եւ կար այդպէս կարգը մեր բոլորին:  
Ով որ ըսէ, ոսկեայ դար է այս եւ հպարտանայ,  
պիտ ըլլայ հարուստ,  
ձեւերէն մէկուն միջոցաւ:  
Դար, տարի, ամիս,  
հանէ մեզ տարփանքէդ,  
բաժին տուր մեր մասութեան:

ՏԻԳՐԱՆ ԳԱԲՐԵԼԵԱՆ

## «ՔԱՄԻՆԵՐԻՑ ԱՅՆԿՈՂՄ»

### ԱՂՕԹՔ

Մի պատառ լոյս ծիրանահամ արեւից  
Մթութեան հետ խմորի՞ր,  
Թող որ գգամ քիմքով հոգուս  
Լուսահիթի կաթքը բիլ,  
Թող որ ըմպեն գոյնը նրա  
Իմ սպասող բիբերով  
Ու թաթախեն մութ հայեացքս  
Գէթ մի վայրկեան լոյսի՛ մէջ...

Մի պատառ լոյս  
Թող պտտուի իմ հոգու մէջ հոյի պէս,  
Թող գարկունն շողերը իր մուգ պատերին  
պատեանհս,  
Թող դրոշմն մաշկիս վրայ  
Լուսասպիներ թափանցիկ  
Եւ թող ջնջեն մթութիւնն իմ  
Ծանձնարձակ մաքրութեամբ:

Մի պատառ լոյս լուսագնդից արեւի  
Մեղութեանս այս պահերին  
Տէ՛ր... հոգուս հետ խմորի:

### «ՊՈՌՆԻԿԸ»

Նրա արծաթէ՛, կաթէ՛ իրանից  
Կաթկթում էին ճիչէ՛ր սպիտակ.  
Կոնքերը արդէն այրում էին  
Հեւացող մարմնի տարփանցից խենք.  
Գլուխը կախ էր ուտերի վրայ,  
Գիշերն էր դանդաղ մահիճն իր ներկում,  
Դրսում անտ էր,  
Իսկ նրա հոգին  
Թայրտում էր ցո՛ւրտ անկողնի վրայ...  
1998 թ.

### ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԷՔՍՊՐՈՍՏ

Կապոյտ - կապոյտ ծովը փրփո՛ւր,  
Փրփուր ծովը հագաւ հո՛ւր,

## «ԱՐՈՒԱՐԶԱՆԻ ԶԱՅՆԱՑՕՂԵՐ»

### ՊՈՒՏԻ ԿԱՄ «ԳԺԵՐԻ» ԱՃՈՒՐԳ

Փարթամ դահլիճ  
Հարուստ որսորդներ

Ուրկանաձեւ ամպին  
Որից ծանր ու թեթեւ որսեր են կախուել  
Մարմիններն են ցուցադրում  
Այնպէս անտէր Անտարքեր

Դահլիճներում մեծ  
Կարծես աճուրդն է ամուր ջղերի  
Ձիգ մկանների  
Խոր գրպանների  
Եւ աճուրդն է երկար դարերի

Աճուրդն ամարտում է  
Քրտնած գործակատարը  
Մորճը վեր պահում  
Եւ ուղիղ  
«Գժերի» գլխին խփում

Գոռում է-  
Մա-խե-ցի  
Եւ մի օտար թռիչքի  
Փոխարժեքն է ստանում

### ՊՈՒՏԻ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Աւարտում է ամէն մի բեմ  
Եւ փշրում ամէն մի վէմ

Նողկալի այս թատրոնից  
Լոկ յուշերն են ճախրում վերեւ  
Ապա խամրում  
Հեռու աստղերի անհուն անտառում

Ամէն մի բարդ հարց  
Որը թուում է անլոյծ  
Եւ ամէն մի Գորդեան հանգոյց  
Պարզ սաղմին է վերածում  
Լուծում են անգօր  
Ժամանակի գորշ լուծոյթում

Իսկ պոետները անէղ եւ անէղծ  
Մահագոյծ ձմրան ցուրտ վերմակի տակ  
«Նիրհում» անհանգիստ  
Գարնան առաջին շողքի հետ Ահհար  
Սթափում շուտով այդ անքուն քնից  
Մնում են նորից  
Լուծում են անվախ  
Փոքրիկ խոտերի կանաչ մարմնում

Օրորում երգում  
Քիտերի դեղին կարուելներում  
Եւ տոչորում աղբամուղջում  
Արեւի հետ արեւմուտքում

Հուրը կրծքին, ծովը արե՛ւ,  
Արե՛ւ դարձաւ ծովը... Ան՛ու,  
Նուրը արե՛ւ ու ծո՛վ բուրբ,  
Նուրը փոքրի՛կ, փոքրիկ բո՛ւն,  
Բուրը ծաղկի՛ Աման բացուեց,  
Մաղկից աչքս քամեց ջո՛ւր,  
Ջուրը աչքիս կախեց արցո՛ւնք,  
Արցունքը ծո՛վ, ծովը՝ հո՛ւր,  
Հուրը սրտիս արե՛ւ բերեց,  
Սիրտս արե՛ւ, բացուած բո՛ւն:

2002 թ.

### ՄԷՐ

Հանճարաքա՛նչ արարչութիւն...  
Մի խառնարան հառաչների հարիւրաձայն,  
Մի մաշկաթափ մոլեգնութիւն,  
Հոգին՝ թերթ-թերթ մարմին տանող նրբակաձայն:  
Հոգետրոփ գարկ սպասման,  
Բո՛յր, հա՛ւ, համբո՛յր,  
Սերմնառութիւն յիպահամ,  
Թո՛ւ՛ջը, խայտա՛նք, ցնծերգութիւն  
Եւ... մի ցնորք... Աստուածախառն:

### ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

Այսօր իմ տան շեմին երկնից բոցե՛ր ընկան.  
Արեգնաբաշ ծովե՛ր ընկան իմ տան շեմին:  
Կարմրափրփուր գինիս արծաթ փայլով խնդաց,  
Գինիս գոյնէ՛ր թափեց իմ տան շեմին:

Ուտերս դողացին, բրդէ շալս ընկաւ,  
Ու մէջքս մերկացա՛ւ այսօր իմ տան շեմին:  
Կուրծքս թրթիտ հագաւ, շուրթս ծիծաղ պտկեց,  
Ծակտիցս ցօ՛ղ ընկաւ իմ տան շեմին:

Աչքս թարթեց փոշի՛ ճայթե՛ց մեղքը յուշի,  
Ու գիրկս ծա՛փ տուեց այսօր իմ տան շեմին:  
Ձեռքս օդում կախուեց... ափս դանդա՛ղ փակուեց,  
Գինիս թափուա՛մ մնաց տանքս շեմին...

ՆՈՒՇԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Առեղծուածային  
Մի անաւարտ ամարտ է խրթին Պոետների  
Թելը կեանքի

Զգացումների անդունդիս միջով  
Մի թիթեռ լողաց  
Եւ վառողաբոյր անտառս դողաց

Երեխաներիս ձայնը խառնուեց  
Խոնաւ խոտերի ծայտուն դիմակին  
Եւ անդունդներիս մերկ ափսոսներից  
Հառաչանքի պէս մի ողջոյն յսուեց  
Եւ գարնանային թիթեռի փոքրիկ  
Թեւերում բարակ  
Մշուշոտ եւ թափանցիկ  
Լուծուեց կլանուեց

Եւ թիթեռնիկը ծարաւ եւ յոգնած  
Այդ հին անտառի կանաչ երդիկին  
Շաղ տուեց Փոռեց  
Խաղաղ ցոլքերի տափաստաններից  
Իր ընծայ բերած  
Բեղմնափոշիներ յոյսի քողարկուած

Անտառները իմ բառերի  
Պատճենն են հարագատ

Իմ անդունդների խորունկ եւ ազատ  
Զգացումների անդունդի միջով  
Մի թիթեռ լողաց  
Եւ վառողաբոյր անտառս դողաց

### ՀՈՍԱՆԻՇ - 4 -

Զութակի թախծոտ մեղեդու մման  
Տխուր սիրելիս  
Մէրը գերթ ստուեր ձգուել ու կախուել  
Օրորում մաղի ցաւոտ անցքերից  
Յուշերով բոլոր  
Իր հին օրերով ոյր ու մոլոր  
Ձեռքերը սիրոյս ճօճում են անյոյս  
Սրածայր հերձող կողերից մաղի  
Որ սրմում է կսկիծով ուժեղ  
Ձերթ վերքերը բաց շրթերից աղի

Իսկ ես սպասում դեռ յոյս եմ տածում  
Եւ քո քայլերն են թաքուն հալածում  
Ձերթ հեռուս խամրած մի աստղ ծերացած  
Որ դու երբ կը գաս  
Ձերթ հրաշք անտես  
Դո՛ւ ինձ ձեռք մեկնես  
Ես վախեցում եմ  
Ես վախեցում եմ որ դու լքես ինձ  
Եւ անց անցքից վերեւ  
Անհուն ու անծայր ունայնութեան մէջ  
Անվերջ դեգերեմ  
Քանգի ես այնքան այնքան եմ ցաւոտ

ՅԱԿՈԲ ՆԱԿՊԵՆՏ

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



Որքան ստեղծագործություն, սկսեալ տիեզերքի արարումն մինչև ամեն րոպե կարելու օրինակը ունեցող գիտությունը կամ բացայայտումը, իր մեջ կը պարունակե սեփական ձեռնարկ, յաղթանակի և պարտության, երբեք էլ եսման հույսերը, որովհետև այդ ստեղծագործությունը ի վերջոյ մարդկության ի սպաս դրուած է եւ դարձած մարդուն պատասխանատուութիւնը, իսկ մարդը իր ստեղծման օրէն ի վեր, իր ազատ կամքով եղած է սխալակամ, յաճախ վատ եւ անարդար ստեղծագործութիւններու եւ գիտերու նկատմամբ:

«Մանուկներուն ձեռքը խաղալիք տուի՞ր», ըսաւ Այնըշթայն, երբ իր համաձայն արգասիքը հանդիսացող հրաշալի գիտերը օգտագործուեցան հիլիական ռուս պատրաստելու եւ Հիրոշիման եւ Նակագաթի կործանելու համար: Այնըշթայնը իր յանձնարարը, թէ մոլորած մտորը...


\*\*\*

Մարդկային ստեղծագործութիւններու եւ արհեստագիտական նուաճումներու կիզակետը հանդիսացող այս տասնամեակներուն, կը բազմապատկուի լաւ կամ վատ արարքներ կատարելու ձեւերը: Այսօր աւելի դիրքի է բաժն

երբեք հսկայական տարողութեամբ եւ հասողութեամբ լաւութիւն կամ վատութիւն ընել, շնորհիւ մարդկութեան նուաճումներուն: Այս խորհրդածութիւններուն տուն տուող պատճառը ջովի սինակներուն մէջ տեղ գտած միւթերը կը համոզուան: Կանձարեղ մտքեր ստեղծած են համացանցը եւ համակարգչային ծրագիրները, իսկ վնասարար եւ մոլորած միտքեր այս երկուքը կը գործածեն համակարգչային ժաիրեր ստեղծելու եւ տարածելու համար՝ աշխարհով մէկ վնաս հասցնելով:

Կանձարեղ միտքեր ստեղծած են ուլպեմը, որպէսզի մարդիկ համացանցի միջոցով ուղղակի վիտո-սփռումներ կարենան կատարել, եւ մարդիկ այսօր դասարաններու մէջ կը գետեղեն այդ ուլպեմները՝ «ապահովութեան» նկատառումներով ուսուցումի եւ դաստիարակութեան օժանդակ լրտեսական ցանցի վերածելով: Եւ ի տես այս բոլորին, արդէ՞ք չափազանցութիւն է պահ մը խորհիլ, թէ մարդու իրեն ի սպաս դրուած ստեղծագործութիւնը, հրաշքը եւ գեղեցկութիւնը պիտի օգտագործէ ինքզինքը եւ իր շրջապատը կործանումի առաջնորդելու...

## ՀԱԶԱՐԱՒՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐ ԱՅՍՕՐ ՊԻՏԻ ՅԱՐՉԱԿԻՆ «ՄԱՅՔՐՈՍՈՓԹ»-Ի ՎՐԱՅ



Իրենց թիրախը ճշգրտած արձակագէտներու նման, հարիւր հազարաւոր համակարգիչներ «լարուած են», եւ կազմ ու պատաստ՝ յարձակելու «Մայքրոսոֆթ» ընկերութեան համացանցի մէկ կայքի վրայ:


Արդարեւ 16 Օգոստոսէն սկսեալ, բոլոր այն համակարգիչները, որոնք վարակուած են «է.մ. է.ս. Պլասթըր» կամ «Լափսէն» համակարգչային ժահրերով տեղեկութիւններ պիտի ուղարկեն «Մայքրոսոֆթ»-ի [www.windowsupdate.microsoft.com](http://www.windowsupdate.microsoft.com) հասցէով կայքին, որպէսզի զայն վար առնեն:

Նշեալ կայքը կ'օգտագործեն «Ուինտոգ» դրութեամբ օժտուած միլիոնաւոր համակարգիչներ՝ դրութեան վրայ կարելու յաւելումներ եւ ճշգրտումներ կատարելու համար:

«Պլասթըր» ժահրը տարածուիլ սկսած է անցեալ Երկուշաբթի օր: «Որդ» ընտանիքին պատկանող համակարգչային այս ժահրը, որուն թիրախները կը հանդիսանան «Ուինտոգ էքս. ֆի. 2000» կամ է.ս. թի. տարբերակները, ամբողջ շարժուան ընթացքին աւեր ու վնաս հասցուցած է բազմաթիւ համակարգիչներու: Թէ է տակաւին վերջնական տուեալները հրատարակուած չեն, սակայն կը կարծուի, թէ հարիւր հազարաւոր համակարգիչներ վարակուած են այս ժահրով:

«Որդ» իր նախորդներէն կը տարբերի այն փաստով, որ կրնայ վարակել համացանցին կապուած որեւէ համակարգիչ, մինչ ժահրերու մեծ մասը ե - նամակի ըրէչմընքներուն միջոցով կը տարածուի եւ համեմատաբար շատ աւելի դիրքաւ կարելի է կանխարգիլել անոնց աւերները:

«Մայքրոսոֆթ» ընկերութիւնը [www.windowsupdate.com](http://www.windowsupdate.com) կայքին մէջ տեղադրած է հակաժահրային ծրագիր մը, գոր արձանագրելով եւ ապա



համակարգիչը սխալաբար ընելով կարելի է ձերբազատիլ ժահրէն:

Ժահրը կը նկատուի «ժամացոյցով գործող ռուս մը», որ պիտի պայթի այսօր:

Վարակուած համակարգիչներ «մաքրելու» համար ամբողջ շաբթուան ընթացքին «մաքրագործումի» արշաւ մը տեղի ունեցած է: Մտահոգութիւններ կան, թէ համակարգչային բազմաթիւ դրութիւններ կրնան «կթիլ» ժահրին դիմաց, երբ ան այսօր իր յարձակումը շղթայագործէ «Մայքրոսոֆթ»-ի կայքին վրայ:


## ԳԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆ, ԹԷ ԼՐՏԵՍՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու Պիլոքսի շրջանի պետական դպրոցներուն աշակերտներուն վերամուտը արտասովոր էր: Արդարեւ, դպրոցներուն իւրաքանչիւր դասարանին եւ նոյնիսկ միջնակցներուն մէջ տեղադրուած էին ուէպէժմներ, որոնք թուագրային վիտէօ-արձանագրութիւններ պիտի կատարեն՝ «աչքի տակ» պահելով դպրոցներուն բոլոր անցուղարձերը:

Դպրոցներուն պաշտօնատարները յայտնեցին, թէ նման միջոցառում եղակի երեւոյթ մըն է Միացեալ Նահանգներու մէջ:

Ուէպէժմներու տեղադրումը սկսած է 2 տարի առաջ, եւ հիմա, որ ծրագիրը հասած է իր աւարտին, շրջանի դպրոցներուն մէջ գետեղուած քամերաներուն թիւը կը հասնի 500-ի:

Ուլպէժմները, որոնք ձայն արձանագրելու կարելիութիւններով օժտուած չեն, տեղադրուած են դասարաններուն առաստաղին վրայ ամրացուած շրջանակաձեւ արկղերու մէջ եւ իրենց տեսողաշար կը ծածկէ դասարանին բոլոր անկիւնները: Դպրոցի սնորհնութիւնը կրնայ հետեւիլ դասարաններու անցուղարձերուն համացանցի միջոցով՝ օգտագործելով ծածկագիր մը (password):



Յայտարարուած է, թէ քամերաներու տեղադրումը նախագրուական քայլ է, մինչ աշակերտներ եւ ուսուցիչներ յայտնած են, թէ այսպիսով առաւել ապահով կը զգան: Մտողներ նոյնպէս չեն զանգատած ի տես այս միջոցառումին:

Թէ է տակաւին Պիլոքսի շրջանի պատասխանատուներ չեն որոշած, թէ ովքեր կրնան դիտել ուէպէժմներուն արձանագրութիւնները, սակայն բացայայտ է, թէ այդ իրաւասութիւնը ունեցողներուն թիւը պիտի ըլլայ սահմանափակ: Կը թուի, թէ դպրոցի սնորհներ, փոխ սնորհներ, հերթապահը եւ փաստաբանը իրաւունք պիտի ունենան դիտելու այս արձանագրութիւնները, սակայն աշակերտներ եւ ծնողներ կրնան այս վիտէօներուն հասողութիւն ունենալ միայն դատարանէն արտօնութիւն ստանալու պարագային:

Պաշտօնատար մը ըսած է. «ցաւալի է, որ հասած ենք հանգրուանի մը, ուր այս միջոցառումի դիմելու հարկադրանքին տակ կը գտնուինք: Ես լրտեսութեան դէմ եմ, սակայն այդ մէկը իմ գաւակներուս ապահովութեան երաշխիք կրնայ հանդիսանալ»:

Միւս կողմէ, Միսիսիփի ուսուցիչներու միութեան նախագահը մտահոգութիւն յայտնեց, թէ քամերաները կրնան ժխտական անդրադարձ ունենալ ուսուցիչ-աշակերտ կապին վրայ: Ան նաեւ կասկածանքով մօտեցաւ այն կարծիքին, թէ կ'արժէր ոճիւրներ կանխարգիլելու միտումով 2 միլիոն տոլարի ծախս կատարել՝ այս քամերաները տեղադրելու համար:

Յամենայնդէպս, Պիլոքսի դպրոցներուն մէջ ուէպէժմներու գետեղումը ստեղծեց նախընթաց մը, որ անգամ մը եւս յառաջ կը նետէ արհեստագիտութեան դարձ մեծագոյն խնդրը, թէ որքանով պատաստ ենք գիլիլ մեր անձնականութիւնէն՝ աւելի հանգստաւէտ եւ ապահով կենք մը ապրելու համար:

## ԱՒԵԼԻ «ԽԵԼԱՑԻ» ԱՌԱՐԿԱՆԵՐՈՒ Ի ԽՆԴԻՐ

Հասած է օրը կահ-կահարսներ աւելի «խելացի» դարձնելու: «Շուկիթուիթու» անուանը կրող արհեստագիտութեան շնորհիւ շուտով կարելի պիտի ըլլայ առանին իրերու վրայ գետեղել գերփոքր եւ գերզգայուն չիփեր, որոնք իրերը պիտի վերածեն խօսող եւ յորդորներ տուող «բարեկամ»ներու:

Եւրոպական համալսարաններու խումբ մը, որ կը զործեն «Մարթ-իթս փրոնէքթ» անուան տակ, այսօր ընթացքի մէջ են այս արհեստագիտութիւնը կատարելագործելու: Մրագիրին մէջ աշխատանքներ տանող Մարթին Սթրոպախ կը բացատրէ՝ «սեղաններ եւ աթոռներ զգայարաններով» կ'օժ-


տենք, եւ այդպիսով, օրինակ՝ կարելի կ'ըլլայ սեղանը օգտագործելով համակարգիչը կամ պատկերասփիւռը աշխատեցնել եւ գործածել...»:

Լանքասթըր համալսարանի եւ Գերմանիոյ, Շուէտի եւ Ֆինլանտայի մէջ գտնուող հիմնարկներու համագործակցութեամբ յառաջացած «Մարթ-իթս փրոնէքթ»-ը կը միտի գերփոքր չիփեր պատրաստել բոլոր առարկաներուն համար:

Այսպէս, օրինակ՝ յատուկ մալքըրիփով մը օժտուած գրագրարանի մը դարակները ենր չափազանց ծանրաբեռնուած են գիրքերով, կրնան խօսիլ եւ զգուշացնել իրենց տէրը, թէ դարակները փլուլու վտանգին տակ կը գտնուին: Դեղատուփի մը

վրայ գետեղուած չիփ մը կրնայ զգուշացնել ենթակային, թէ դեղին «օրը անցած է»:

Այս բոլորը հաճելի եւ քիչ մըն ալ անհաւատալի կը թուի ըլլալ: Սակայն, այս նուաճումները կ'անցնեն հաճելիէն անդին եւ մեծ օգտակարութիւններ կրնան ունենալ: Սթրոպախ կը բացատրէ. «Կարելի է այս արհեստագիտութիւնը օգտագործել, օրինակ՝ ծերերու հոգատարութեան համար: Զիփեր կրնան տեղեակ պահել, թէ ձեր հոգածութեան տակ գտնուող տարեցը ինչ կած է, կամ ոտքի կանգնիլ չի կրնար: Միւս կողմէ, այս արհեստագիտութիւնը անձնականութիւնը չտեսակոխելու վիտոքս մերաներու նման»:



Տեղ մը, եղափոխութեան գործընթացին մէջ մեծ սխալ մը պատահած է...



«Նախ համացանցին վրայ փնտռուել կը կատարեն...»

Պատրաստեց՝ ԽԱԶԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

[www.aztagdaily.com](http://www.aztagdaily.com)

## ԶՍՄԱՌՈՒ ՏԻՐԱՄՕՐ ԿԱՆԵ

### ՏՕՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ

Կիրակի, 17 Օգոստոս 2003  
Հայրապետական Սուրբ Պատարագ եւ խաղողօրհնէք ժամը 10:30-ին


Կէսօրէ ետք 6:00ին Սուրբ Պատարագ



# Մանկապատանեկան

## ԿՈՒՉԵՍ ԱՐԱԳ ԼՈՂԱԼ

Մեզի համար լողալը դիրքին կ'երեւի: Սակայն, ան իսկական արւեստ մըն է՝ իր տարբերակներով, օրէնքներով: Պէտք է ծփալ, դէպի առջեւ նետուիլ, մտածել լաւ շնչելու մասին...



### ԱՄԵՆԵՆ ԴՓՈՒՄՐ ԼՈՂԸ «ՊՐԱՍ»Ը

«Պրաս» լողալու ձեւը եղած է մարդուն որդեգրած առաջին լողալու ձեւը՝ ջուրին մէջ տեղափոխւելու համար: Ան լողալու ամէնէն դանդաղ ձեւն է, եւ նաեւ՝ ամէնէն դժուարը:

### 1. ԻՆՉՈՒՒ ՄԵՆՔ ԿԸ ՄՓԱՆՔ

Ջուրին մէջ մտնելու ժամանակ մարմինը կը տեղափոխուի ջուրի ծակէն: Եթէ այս մարմինին կշիռը աւելի ծանր է, քան տեղափոխւած ջուրի ծակին կշիռը, մարմինը յատակը կ'իջնէ: Եթէ մարմինին կշիռը աւելի թեթեւ է քան տեղափոխած ջուրի ծակին կշիռն է, ան կը ծփայ:

Երբ մենք ամբողջովին ջուրին մէջ կ'ըլլանք եւ մեր թոքերը կ'ուռնենք, մեր մարմինին կշիռը քիչ մը աւելի նուազ կ'ըլլայ՝ զայն տեղափոխած ջուրի ծակին կշիռէն: Հետեւաբար, մենք կը ծփանք:

### 2. ԻՆՉՊԵՍ ԿԸ ՅԱՌԱՋԱՆԱՆՔ ԶՈՒՐԻՆ ՄԵՋ

Երբ մենք կը յողանք, մենք կը ծփանք ջուրին վրայ: Ապա, մեր ձեռքերով եւ ոտքերով ջուրը դէպի ետեւ կ'ուղղենք. մեր մարմինը դէպի առջեւ կը նետուի: Մենք որքան արագ լողանք, մեր մարմինը այդքան հորիզոնական դիրք կ'առնէ, եւ մենք աւելի լաւ կը շնչենք:


### ԱՄԵՆԵՆ ԱՐԱԳ ԼՈՂԸ «ՔՐՈԼ»Ը

«Քրոլ» կը ներշնչուի հարաւային խողովակներէ բնիկ ժողովուրդներուն լողէ մը:

ստեղծենք ալիք մը, որ մեզի կը դանդաղեցնէ, եւ երբ մենք մեր թեւերը դէպի առջեւ կը կցենք: Հետեւաբար, աւելի արագ լողալու համար, պէտք է մը աւելի նուազ կ'ըլլայ զայն տեղափոխած ջուրի ծակին կշիռն է: Հետեւաբար, մենք կը ծփանք:

### 2. ԻՆՉՊԵՍ ԿԸ ՇՆՉԵԼ

Շնչելու համար պէտք է մեր բերանը ջուրէն դուրս հանենք: Իսկ եթէ մեր գլուխը բարձրացնենք, մեր մարմինը նուազ երկնցած պիտի ըլլայ, եւ մենք պիտի կցենք մեր մղումը: Հետեւաբար, եթէ մենք մեր գլուխը երկար ժամանակ ջուրէն դուրս հանենք, աւելի դանդաղ պիտի լողանք: Աւելի լաւ լողալու համար, պէտք է օգտագործենք այն վայրկեանը, երբ մեր բերանը ջուրէն դուրս է միայն շնչելու համար, եւ



### 1. ԻՆՉՊԵՍ ԱՒԵԼԻ ԱՐԱԳ ԼՈՂԱԼ


Երբ մենք կը լողանք, կարգ մը շարժումներ մեզի դէպի առաջ կը նետեն, ուրիշներ՝ կը կցենք: Յառաջանալով մենք կը

մենք օդը դուրս կ'արձակենք ջուրին մէջ:

### ԶՈՒՐԻՆ ՄԵՋ

ԳԼՈՒՄԻՆ: Ան չի ձգեր, որ մագերը ջուրին

## ԾՈՎԱՍՏՂԸ



Գիտէ՞ր, որ երբ ուրիշ ծովային կենդանի մը ծովասողին վրայ կը յարձակի եւ կ'ուզէ զայն որսալ, ան իր թեւերէն մէկը անոր կը ձգէ եւ կը փախչի պահուրտելու: Եւ երբ անոր վերջը սպիանայ, ան կը փրկուի: Թեւը կարծես կախարդական ուժով մը մղուած՝ դարձեալ կը բուսնի:

Անոր փուշերը շատ պզտիկ են եւ անվնաս: Սակայն, ուշադրութիւն՝ կարգ մը տեսակներու պարագային անոնք կրնան երկար եւ թունաւոր ըլլալ:

Անոր ոտքերը բազմաթիւ են եւ մանր: Անոնց ծայրերը գոյուլթիւն ունին ծծոցներ, որոնց շնորհիւ ծովասողը կրնայ սողալ, սահիլ եւ ետ դառնալ:

Անոր մորթը կ'ըլլայ կարմիր, նարնջագոյն, գեղին կամ նոյնիսկ՝ քիչ մը կապոյտի նմանոյ: Անոր գոյնը քիչ մը աւելի մոլթ կ'ըլլայ կոնակին վրայ, քան՝ փորին:

## ՇԱՏ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՅՆ ՄԸ՛ ԿԱՊՈՅՏԸ

Գոյները ունին գլխաւոր յատկութիւն մը. ամոքը մեր մէջ զգացումներ կը յառաջացնեն: Կրնան մեզի երազել տալ, ջղայնացնել, բախտաբեր ըլլալ կամ նոյնիսկ մեզ վախցնել...

Բազմաթիւ երկիրներու մէջ մարդոց նախասիրած գոյնը կապոյտն է: Ինչո՞ւ այս գոյնը տարբեր ժողովուրդներ իրարու մօտեցնելու յատկութիւնը ունի:

Պատմաբաններ, ինչպէս նաեւ ընկերաբաններ փորձած են պատասխանել այս հարցումին՝ առանց իսկական պատասխան մը գտնելու:

Միակ ճանչցուած կէտը այն է, թէ մինչեւ միջին դարերը կապոյտը շատ սիրուած գոյն մը չէ եղած: Ապա ներկարարները միջոց մը կը գտնեն կերպասները այս գոյնով հաստատօրէն ներկելու: Կապոյտը կը սկսի ու-



նինալ առաջնակարգ դիրք մը: Օրինակ՝ ան յաճախ կը գործածուի գեղանկարներուն մէջ, Աստուածամօր պատկերներուն պարագային: ան նոյնիսկ կը դառնայ թագաւորներուն գոյնը:

Կապոյտը շատ սիրուած գոյն մըն է նաեւ, որովհետեւ ան հանդարտեցնող յատկութիւն ունի. ան երկրներին եւ հորիզոնին գոյնն է: Կապոյտը երազելու հրաւիր մըն է: Ան հանդարտ գոյն մըն է, որ մարդիկը կը միացնէ: Այս ձեւով, օրինակ, ան որդեգրուած է բազմաթիւ միջազգային կազմակերպութիւններու կողմէ (ՄԱԿ...), որոնք զայն դրած են իրենց գրօշակներուն վրայ, խաղաղութիւն եւ ժողովուրդներու միջեւ փոխադարձ հասկացողութիւնը յառաջացնելու համար:

Չմոռնանք, որ կապոյտը նաեւ ջուրին գոյնն է: մինչ մինչեւ միջին դարերը ան կանաչով կը ներկայացուէր քարտէսներուն վրայ:

## ԱՅԼԱԶԱՆ


### ԽՍՕՍՈՒՆ ԶԵՆՈՅԸ

18 տարեկան ամերիկացի մը հնարած է մեքենայ մը, որ կարելիութիւնը կու տայ թարգմանելու համբերու կողմէ գործածուած մատնախօսութիւնը:

Այս մեքենան իւրապատուկ ձեւերով մըն է, որուն վրայ գտնուող յատուկ ընդունիչներու շնորհիւ կարելի է ճանչնալ զայն դնող անձին շարժումները, զանոնք կը թարգմանէ եւ գրուած թարգմանութիւնը կը ցուցադրէ պատասխան մը վրայ:


### ԸՆԶԱՌՈՒԾՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՇԱԿՈՏ

Ամերիկացի գիտնականներ կը հաստատեն, թէ ընծառիւծները կը սիրեն անուշահոտը:



Անոնք անուշահոտ սիրած են կենդանաբանական պարտէզի մը ծառերուն շուրջ եւ նշմարած են, թէ ընծառիւծները եւ յատկապէս հզերը աւելի մեծ թիւով կը մօտենային ծառերուն: Ըստ անոնց, այս գազանները նոյնիսկ զգայուն են յատկապէս ամէնէն սուղ եւ նուրբ բուրմունք ունեցող անուշահոտի տեսակներուն նկատմամբ:

## Ժ Ա Մ Ա Ն Ց



Կրնա՞ս օգնել շնիկին, որ իր ձագուկներուն մօտ հասցնող ճամբան գտնէ՝ հետեւելով 6ի բազմապատկեալներուն:



Կրնա՞ս գտնել իւրաքանչիւր պզտիկի համապատասխանող շուրջը:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ գոյութիւն ունեցող ութ անբնական մանրամասնութիւնները:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

www.hamazkayin.com

**ԱՖՀԻԼ AFHIL**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**

**AT HOME**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**RENT AND SALE**



**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen We Also Provide
- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

**ՑՈՒՑԱՍՏՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԿ (ԵՆՈ. 02) 242556/7**

**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**



**Haigazian University**  
Admission and Enrollment  
Fall 2003 - 2004

**Now Accepting Applications!**  
Undergraduate and Graduate Studies  
BA, BS, Teaching Diploma, MA & MBA

Haigazian University - Kantari, Hamra  
Tel.: 01-349230/1, 01-353010/1  
E-mail: admissions@haigazian.edu.lb  
Or visit us at: www.haigazian.edu.lb

**Valuing Higher Education**

**ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈԼԵԳ 2003-2004 ՏԱՐԵՇՐՁԱՆ**

1. ՎԵՐԱՍՈՒՏ 2003-2004 տարեշրջանը կը սկսի հետեւեալ ժամանակացոյցի հիմամբ.  
Երեքշաբթի, 2 Սեպտեմբեր՝ ՄԱՆԿԱՍՍՈՒՐԻ Երկուշաբթի, 15 Սեպտեմբեր՝ Ժ. ԿԱՐԳԵՐԸ: Երկուշաբթի, 22 Սեպտեմբեր՝ Թ. ԿԱՐԳԸ: Հինգշաբթի, 2 Շոկտեմբեր՝ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ, ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ բոլոր կարգերը:  
Երկուշաբթի, 6 Շոկտեմբեր՝ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ: 2. ՀԱՄԱԶԳԵՍԻՏԻ, ԳՐԵԻ ԵՒ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՅԻՒ ԿԱՆՈՒՅՐ ԵՒ ԿՈՆՏԱԿՏԱՆԻ Սեպտեմբեր 22-26, ժամը 8:00էն 14:00ի մինչեւ:  
3. ԳՐԱՍԵՆՆԱԿԻ ԺԱՍՏԵՐ  
Օգոստոս ամսուան ընթացքին սնօրեւորիւնը վարժարան պիտի ըլլայ ամէն ԵՐԵՃԱՐԹԻ, ժամը 8:00էն 13:00:  
Երկուշաբթի, 1 Սեպտեմբերէն սկսեալ վարժարանի բոլոր գրասենեակները բաց պիտի ըլլան ամէն օր բացի Շաբաթէն ժամը 8:00էն 14:00:  
**ՏՍՕՐԵՆՈՒԹԻՒՆ**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

Նախագահութեամբ  
**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ,**  
յառաջիկայ Երկուշաբթի, 18 Օգոստոսին, Պիք-Ֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ յաւարտ Ս. պատարագի հոգեհանգստեան արարողութիւն պիտի կատարուի Ս. Աստուածածին մատրան բարերարներուն ԵՐՈՒԱՆԴ ԵՒ ԱԼԻՍ ՏԵՄԻՐՃԵԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՏԵՄԻՐՃԵԱՆ գերդաստանի համայն Ընջեցեալներու հոգիներուն համար:

**ԽԱԶԲԱՌ ԹԻԻ 5515**  
Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

**«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՍԱՐ**

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժնումը հասցնեն հրատարակման բուխակէն առնուազ օր մը առաջ, ՄԻՆՁԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄՐ 5:00:  
ՄԱՀԱՉԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահազդ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

**★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★**

**ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)**  
Դուք ձեզի հանոյք պատճառեցէք նորոգելով ձեր հագուստներու տեսակաւին կամ դուք ձեզի նուիրելով թանկագին առարկայ մը, գոր կ'երագէիք: Օրը պիտի անցնի ուրախ եւ գործնական:  
**ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)**  
Եթէ յոգնած կը գգաք, այսօրուան աշխատանքները ուրիշ օրուան յետագայէն մի՛ վարանքիք, ու այս պատճառով յանգստի զգացողութիւն մի՛ ունենաք: **ԵՐԿՐՈՒՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)**  
Դուք մէկն էք, որուն կարելի է գաղտնիք վստահիլ, ու այսօր պիտի ըլլաք յարգանքի արժանի անձը: Այս պարագան իրաւամբ կը շոյէ ձեր գագուստները: **ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)**  
Եթէ յաւելեալ ժամեր կ'աշխատիք ամսուան ծախսերը հոգալու համար, մանաւանդ՝ եթէ ուսանողի վիճակ ունիք, քիչ մը պիտի յոգնիք: Այս պատճառով ամէն հարց մէկ կողմ մի՛ ձգէք: **ԱՌԻԻԾ (24 Յունիսէն 23 Օգոստոս)**  
Արտասահման գտնուող ձեր ազգականներէն կամ ձեր բարեկամներէն շատ լաւ լուրեր պիտի ստանաք: Օրը ունի ուրախ առիթներ, շահաբեր աշխատանքներ: **ԿՈՅ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**  
ձիշդ է, որ մեծ ծախսեր ունիք կատարելիք, բայց կրնաք գանձք յետագայէն քանի մը շաբաթ եւս: Ժամանակ տրամադրեցէք քիչ մը մտածելու, հարցնելու խորհուրդը ձեր շուրջ գտնուողներուն: **ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**  
ձաշկերոյքի մը ընթացքին՝ բարեկամներու հետ, շատ առաջ մի՛ անցնիք ձեր կարծիքները փոխանցելու: Ոմանք պիտի չուզեն, որ զիրենք շուրջի մէջ ձգէք: **ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**  
Եթէ դեղեր կ'անէք, պէտք է անդէք օրը օրին, ճիշդ ժամերուն: Եթէ կը մոռնաք, ըսէք ձեզի մօտիկ անձի մը, որ յիշեցնէ ձեզի: Այս օրերուն քիչ մը մոռացկոտ եղած էք: Մովուն օրը կրնայ կազդուրել ձեզ: **ԱՆԵՂՆԱԿՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**  
Գիտք ուրախացնել ձեր շրջապատը, անոնք ըլլան ազգական, բարեկամ թէ ձեր գաւակները: Ուրեմն, այսօր պատրաստեցէք զուարթ անակնկալ մը՝ ըստ ձեր նաշալին:  
**ԱՅՑԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**  
Ձեր տան ներքին կահաւորումը փոխելու համար առանձին որոշում մի՛ տար: Անոնք, որոնք ձեզի հետ կ'ապրին, կրնան ղոգոն մնալ, թէ իրենց տեսակետը չէր առած: Ուրեմն համեմատաբար շտապաբար որոշեցէք: **ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)**  
Ձեր հարազատներէն հետո մնացած էք, ուրեմն վերահաստատեցէք ձեր կապը ձեր եղբայր - քոյրերուն հետ՝ այս շաբաթավերջին գանձք հրաւիրելով ճաշի մը:  
**ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**  
Ձօրաւոր փափաք մը ունիք դրամ ծախսելու: Ինչ մը հանդարտեցէք, որովհետեւ դեռ ամսուան կիսուն կը գտնուիք. ետքը դրամական նեղութիւն կրնաք ունենալ:

**ՕՐԱՏԵՏՐ**

ՓՈՒԱՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԳԵՍ / ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

**ՅՐԱՆԱԿԱՆ «ՕՐՑԵՈՍ» ՍԻՄՅՈՆԻՔ ՆՈՒԱԳԱՍՈՒՄԻՆ ԵՐԿՈՒ ԵԼՈՅԹՆԵՐԸ**

«Ետաքրքրական երեւոյթ է, որ լիբանանեան լեռներուն վրայ տեղի ունեցող մշակութային բազմաբան գիտական մէջ իրենց լուսնային լուսնային գիտական փառաստուծներէն անշատաբար կազմակերպուող գեղարւեստական երեւոյթներ: Ճիշդ է, անոնք չունին ունի ունի չունին եւ գրաւորութիւնը, ինչ որ ունին կարեւորագոյն փառաստուծներու յայտագիրներուն մէջ ներառուած գործերը, սակայն անոնք եւս իրենց շուրջ առաւել կամ նուազ տարողութեամբ կը յարգուին համախմբել արուեստագիտական բազմութիւն մը: Այսօրինակ մշակութային նախաձեռնութիւններն իրենց ֆրանսական թուրքադարի լիբանանեան երկու ելոյթները, որոնք տեղի պիտի ունենան այսօր, երեկոյեան ժամը 7:30ին, Սուրբի մէջ եւ յառաջիկայ Ուրբաթ, 22 Օգոստոսի երեկոյեան ժամը 7:30ին, Նիւ-հայի հոռուական տաճարին ատերակներուն մէջ: Թուրքադարի Ռապիէ համալսարանի «Օր-ֆէն» սիմֆոնիք նուագախումբը կը ղեկավարէ խմբավար Ժան Բլեման Ժոյէ: Այս ելոյթներուն կ'ընկերակցի լիբանանեան պարիթոն Էլի Ռըպալլա: Ելոյթներուն յայտագիրը կ'ընդգրկէ դասական երաժշտութիւն, բաղկացած՝ Վիվալտիի եւ Կոլտայի ստեղծագործութիւններէն: Իսկ նուագախումբներուն առաւել եւս լիբանանեան մթնոլորտ տալու նպատակով յայտագիրը ընթացքին կ'ընդգրկէ իսկապէս լիբանանեան երաժշտութիւնը: Իսկ նուագախումբներուն մէջ յարգուին իսկապէս լիբանանեան երաժշտական այլ խումբի մը նուագներն ու կերակրութեամբ ընթացքին: Իսկ Նիւ-հայի ելոյթին ետք տեղի պիտի ունենայ հոռուական տաճարին սիւններուն տակ ընթացքը:»

**ԱՅՍՕՐ**

- Պատկերի փառաստուծ. Չիւստուանի կայսերական կրկէսի ելոյթ. ժամը 20:00ին, մինչեւ 17 Օգոստոս:

- Տէյր Էլ Ամարի փառաստուծ. նուագահանդէս, «Մանտէլ պուգ պենտ», ժամը 21:00ին, Մընչիէ:

- Նուագահանդէս, «Օրֆէն» սիմֆոնիք նուագախումբի ելոյթ, ժամը 19:30ին, Սուրբ:

- Տարագներու ցուցահանդէս «Քոսթիմ սան ֆրոնթիեր», ԵՈՒՆԵՍԿՕ, մինչեւ 19 Օգոստոս:

- Տօնավաճառ՝ Ջուր Միքայէլի հին շուկան, մինչեւ 24 Օգոստոս:

- Ցուցահանդէս «Փունուս Պիստուս», Պիստուսի շոգեկառքի կայարան:


- Նկարչական ցուցահանդէս «Փասիոնէ», Իհսան Համոյի գործերը, «Ջաման» ցուցարան, մինչեւ 16 Օգոստոս:

- Պարսիկ ներկայացում՝ «Կրացիա տը Մատրիս», գիշերուան ժամը 10:00ին, «Քաղիս Տիւ Լիպան»ի «Մալ տէ Գ՝Ապաստուօր» սրահ, մինչեւ 27 Օգոստոս:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Նուվօ Թալան», Սիբրիա Քարամի եւ Նայլա Թալապի գործերը, «Փընէ» ցուցարան, մինչեւ 22 Օգոստոս:

- Արկածախնդրական խաղերու փառաստուծ՝ «Էքսպրիմ Էսպիտէլը Փարք» Պիէլ, մինչեւ Օգոստոսի վերջը:

**ՕՐՆԵՐՈՒՅՑ**



ՀԱՐԱԹ,  
16 ՕԳՈՍՏՈՍ 2003

**ՊԵՅՐՈՒԹ ԱՐԵՒՈՏ**

**ՋԵՐՄԱՍԻՃԱՆ ԾԵՐԵԿ՝ 32°C**

**ԳԻՇԵՐ՝ 25°C**

**ԿՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 63%**

**ԱԶԳԱԿ 50 ՏԵՄԵՐԻ ԵՄՈՒՄԸ**  
16 Օգոստոս 1953

**ՏԻԿԻՆ Զ. ՍԵՐՈՐԵԱՆԻ ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆԸ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՄԵՉ**

Միացեալ Նահանգներու Հ. Օ. Միութեան Կեդրոնական վարչութեան անդամ Զ. Սերոբեան մօտ 3 ամիս տեւող ճամբորդութեան մը ձեռնարկեց Աճապիլայէն մինչեւ Լիբանան եւ Սուրիա՝ այցելելով հայաշատ գաղութներ եւ մօտէն հետաքրքրուելով անոնց կեանքով: Զ. Սերոբեան վերադարձը ըլլալով Ամերիկա՝ հետեւեալ յայտարարութիւնները կատարած է՝ «Հայրենիք»-ի բողոքական իր պատած գաղութներուն ազգային եւ մշակութային կեանքին մասին:

- Ազգային կեանքը նախկին Զ. Սերոբեանի մէջ, որովհետեւ հազիւ քանի մը օր մնացի Աճապիլ (Լոնտոն), ֆրանսական գաղութը կը շարունակուի մշակութային կեանքը վառ պահել հանդէսներով, դասասուրբիւններով, որոնք կը կազմակերպուին զանազան միութեանց, կազմակերպութեանց կողմէ: Ձանք կը բաժնուի նոր սերունդի հայապահպանման համար, որ սակայն այնքան դժուարութիւններ ունի հանդիպի, ինչպէս այստեղ: Տրուած պայմաններուն տակ իրենց լաւագոյնը կ'ընեն յամառ ճիւղերով: Աճապիլ, ամէնէն արդիւնաւոր ազգային, մշակութային կեանքը կ'ապահովէ Սերոբեան Արեւելի գաղութներուն՝ Սուրիոյ, Լիբանանի, Եգիպտոսի եւ Յունաստանի մէջ:

- Սուրիոյ եւ Լիբանանի մէջ յատկապէս դպրոցական կարիքը ճնշուի է: Նախկինը կատարուելու եւ երկրորդական վարժարաններու պահանջ կայ, Պիքիւրի առաջնորդը:

(ՀԱՏՈՒԱԾ)

**ԱՅՍՕՐ՝ 16 ՕԳՈՍՏՈՍԻՆ**  
■1960 - Սահ Հոյաջ Փափագեանի:

**ԹԻԻ 5514**

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Լ	Ա	Մ	Ք	Ր	ՈՒ	Ս	Ս	Ի	Ի
2	Ա	Ր	Ա	Ք	Ր	ՈՒ	Ս	Ս	Ի	Ի
3	Կ	ՈՒ	Ք	Ր	ՈՒ	Ս	Ս	Ի	Ի	Ի
4	ՈՒ	Ք	Ր	ՈՒ	Ս	Ս	Ի	Ի	Ի	Ի
5	Ս	Ս	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի
6	Ս	Ս	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի
7	Ի	Ս	Ս	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի
8	Գ	Ս	Ս	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի
9	Ս	Ս	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի
10	Ս	Ս	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի
11	Ս	Ս	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի	Ի

**ԽԱԶԲԱՌԻՆ**

**ԼՈՒԾՈՒՄԸ**



**ԼԻԲԱՆԱԼ**  
**ՄԻՔԱԹԻ ԼՈՒՄԱՐԶԱԿԻ**  
**ՏԱԿ Կ'ԱՌՆԵ ԹՐԻՓՈԼԻԻ**  
**ԴԻՍԱԳՐԱԲԱԾ**  
**ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Հանրօգուտ շինությունները և փոխադրությունները հարցերու նախարար Լեոնիդ Միքաթի երեկ նկատել տուաւ, որ անհրաժեշտ է Թրիփոլիին փրկել քաղաքական եւ ոչ-քաղաքական բանավեճերէ եւ ամէն ջանք ի գործ դնել նախաձեռնելու համար Թրիփոլիի բարգաւաճման ծրագիրներու:

Միքաթի կոչ ուղղեց օժանդակել Թրիփոլիի կարիքները գոհացնելու աշխատանքին եւ վերջ մնալ Թրիփոլիի կարիքները բանավեճեր եւ լարուածութիւններ ստեղծելու նպատակով շահագործել:

**ՍՅԷՅՐ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԵՍՓՈՒՍԱՆ**  
**ԷՄԻԼ ԼԱՅՈՒՏԸ**

Մարտիններու Նասրալլա Սֆէյր պատրիարքը երեկ Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին առիթով Տիմանի պատրիարքարանին մէջ նախագահեց պատարագի մը, որուն ընթացքին շեշտեց Մարիամ Աստուածածնայ բարիքները, յոյս յայտնելով, որ ներկայ դարու մարդիկ եւս մնանին անոր, վերջ տալով փառապաշտութեան եւ հոգեւոր արժանիքներու անտեսումին:

Սֆէյր պատրիարքը Տիմանի մէջ ընդունեց երիտասարդական եւ մարմնակրթութեան հարցերու երեսփոխանական յանձնախումբի նախագահ երեսփոխան Էմիլ Լաիուտը, որուն հետ քննարկեց տեղական պարագայները, յատկապէս՝ տնտեսական կացութեան առնչուող տագնապները:

Լաիուտ հաւաստեց իր մերժումը կառավարութեան կողմէ որեւէ յաւելուելու տուրքի պարտադրումին եւ աւելցուց, որ տնտեսական տագնապին լուծումները քաղաքացիներուն հաշտոյն կատարելը անընդունելի է, այլ կառավարութենէն կը պահանջուի տնտեսական հարցերու լուծման յստակ ծրագիր մը մշակել:

Նշենք նաեւ, որ Սֆէյր պատրիարքը ուղղուեցաւ Պշարբէ, ուր արժանացաւ ժողովրդային շքանշանով ընդունելութեան եւ նախագահեց Պշարբէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ կատարած յատուկ պատարագին:

**ԱՇԽԱՏԱԴՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ**  
**ՉԱՍԱԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎ**

Աշխատանքային Ընդհանուր Համադաշնակցութեան նախագահ Ղասսան Ղարնի գլխաւորութեամբ նախանցեալ օր համադաշնակցութեան անդամները գումարեցին ժողով մը, որուն ընթացքին քննարկեցին յառաջիկայ երեքշաբթի, 19 Օգոստոսին կայանալիք ազգային սենտիքայական վեհաժողովի նախապատրաստական աշխատանքները:

Միւս կողմէ, քաղաքական, կուսակցական եւ կրօնական ղեկավարութիւններուն կատարած իր շրջապտոյտին ծիրէն ներս Ղարն այցելեց Հրկայալլայի ընդհանուր քարտուղար Հասան Նասրալլայի, որուն հետ քննարկեց երկրին տնտեսական եւ ընկերային մարկետին առընչուող հարցերը:

Ղարն Նասրալլան հրաւիրեց ներկայ գտնուելու ազգային սենտիքայական վեհաժողովին:

**ԿԱՑՈՒԹԵԱՆ**  
**ՅԱԻԵԼԵԱԼ**  
**ԲԱՐԴԱՑՈՒՄԸ ...**

Ծարուն նաեւ կրկնած է, թէ Արաֆաթ կը շարունակէ խաղաղութեան դիմաց ցցուող խոչընդոտ մը ըլլալ եւ թէ ան «խաղաղութեան դէմ կ'աշխատի»:

Մինչ այդ, իսրայէլեան պիւնտարական գործողութիւնները շարունակուած են: Պաղեստինեան աղբիւրներու համաձայն, Հինգշաբթի գիշեր եւ երեկ 11 պաղեստինցիներ ձերբակալուած են:

Անոնցմէ պիւնտարի պայքարի դիմած երեքը երեկ առաւօտուն հիւսիսային Այսրորդանանի քաղաքի շրջանին մէջ ձերբակալուած են բախումէ մը ետք, որուն ընթացքին անոնցմէ մէկը վիրաւորուած է:

Միւս կողմէ, երեկ Կապա քաղաքին մէջ Համաս շարժումին աւելի քան 6000 անդամներ ցոյց մը կատարած են պահանջելով, որ Իսրայէլ ազատ արձակէ իր բանտերուն մէջ արգելափակուած պաղեստինցի բոլոր բանտարկեալները:

Համասի բարձրաստիճան ղեկավար Իսմայիլ Հանիէ անոնց յայտնած է, թէ պաղեստինցի բանտարկեալները Սեպտեմբերի սկիզբը հացադուլի պիտի դիմեն՝ պիւնտարի ազատ արձակելու գծով Իսրայէլի մերժողական կեցուածքին դէմ:

(ԱՅՓ)

**ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԸՈՍԱՆՔԻ**  
**ՎԵՐԱՇՈՒՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ**  
**ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԻ**



Հիւսիսարեւելեան Մ. Նահանգներու եւ հարաւային Քանադայի մէջ էլեկտրական հոսանքը երեկ դանդաղօրէն կը վերահաստատուէր՝ աներկեան պատճառով մէջ էլեկտրական հոսանքի ամէնէն ծանրակշիռ ընդհատումէն ետք, որ շուրջ 50 միլիոն հոգի ցնցած է:

Նիւ Եորք քաղաքը եւ հիւսիսարեւելեան շրջաններու մեծ մասը ժամերով անդամալուծուած են յանկարծակի ընդհատումին պատճառով, որ միաժամանակ Նիւ Ճորժիէն Թորոնթօ հարւածած է:

Նախնական խուճապը, թէ մրտութեան ախիբը կը նշանակէ ահաբեկչական բնութիւն յարձակում մը, վերջ գտած է, երբ պաշտօնաւորները շեշտած են, թէ թեքնիք խանգարում մը պատճառով է էլեկտրական հոսանքին ընդհատումը:

Նիւ Եորք նահանգի կառավարիչ Ճորժ Փաթաքի երեկ յայտնած է, թէ Քանադա կրնայ «աղբիւրը» ըլլալ Հինգշաբթի օրունայ էլեկտրական հոսանքի ընդհատումին:

Փաթաքի «Էն. Պի. Մի.» պատկերասփիւռի կայանին ըսած է, թէ տակաւին յստակ չէ, թէ ընդհատումին պատճառը ինչ է:

Սակայն Նիւ Եորքի էլեկտրական ցանցի պատասխանատու գրասենեակը յայտնած է, թէ գրեթէ վստահ է, որ հարցը սկսած է Օնթարիոյի արեւմուտքը եւ տարածուած դէպի հիւսիսարեւելեան Մ. Նահանգներ:

Քանադայի մէջ ստիկանութիւնը յայտնած է, թէ Հինգշաբթի գիշեր գողութեան մեկուսացած դէպքեր եւ 40 ձերբակալութիւններ արձանագրուած են: Օնթարիոն եղած է քանադական միակ նահանգը, որ դիմագրքուած է հոսանքի ընդհատում:

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորժ Պուշ յայտարարութեան մը մէջ երեկ նշեց, թէ էլեկտրական հոսանքի ընդհատման ստեղծած տագնապը Միացեալ Նահանգներու իշխանութիւնները պէտք է մղէ արդիականացնելու Միացեալ Նահանգներու էլեկտրականութեան ծառայութեան համակարգը:

(ԱՅՓ)

**ՓԱՐԻՉ ԿՐ ՄՊԱՌՆԱՅ ԽԱՓՆԵԼ ԼԻՊԻՈՅ**  
**ԴԵՄՊԱՏՄԵՆՏՆԵՐՈՒ ԶՆՉՈՒՄԸ**

Լիպիոյ արտաքին գործոց նախարար Ապտէլ Ռահման Շալլամ երեկ Ֆրանսա նախատեսած է շանթի յանցանքով:

Փարիզ սպառնացած է խափանել Լիպիոյ դէմ ՄԱԿի պատժամիջոցներու վերացման գծով համաձայնագիր մը, եթէ Թրիփոլի յաւելուելու գումարներ չվճարէ 1989ին ֆրանսական օդանաւի մը ձերբակալութիւնը վրէժախնայ ընտանիքներուն:

Լիպիա ընդունած է 2,7 միլիար տոլար վճարելու 1988ի Լոքըրպիի ձերբակալութիւնը վրէժախնայ ընտանիքներուն՝ միջազգային պատժամիջոցներու աստիճանական վերացման փոխարէն:

Ֆրանսա յստակ դարձուցած է, թէ նման հատուցում կը պահանջէ Մահարա նախապետին վերջին պայթած օդանաւին 170 զոհերուն ընտանիքներուն համար:

Ուաշինկթընի մէջ ամերիկացի պաշտօնատարներ պայքարում են ֆրանսական կեցուածքին համար: Փարիզ կը սպառնայ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին մէջ վերջին իր իրաւունքը օգտագործել՝ խափանելու համար Լիպիոյ դէմ պատժամիջոցները շնչող բանաձեւ մը:

**ՄՈՒՃԱՅԻՏԻՆ ԽԱԼԹԻ**  
**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՒԻՆ**  
**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ**  
**Կ'ԱՐԳԻԼՈՒԻ**

ՌԻԱՇԻՆԿՊԸՆ, 1 (ԱՅՓ).- Մ. Նահանգներ Ուրբաթ օր արգիլած են իրանեան ընդդիմադիր Մուճաիտին խալթի խմբակին քաղաքական թեւին գործունէութիւնը, ստեղծելով անոր ունեցուածքներու եւ պատրաստուելով Ուաշինկթընի մէջ անոր գրասենեակները փակելու:

Ըստ արտաքին գործոց նախարարութեան, խմբակը ահաբեկչական կազմակերպութիւն մըն է:

Մուճաիտին խալթի խմբակը որոշ ատենէ մը ի վեր Ուաշինկթընի ահաբեկչական կազմակերպութիւններու վերաբերող սեւ ցանկին վրայ կը գտնուի, սակայն անոր քաղաքական թեւը ամերիկեան ատեններու մէջ ցարդ պայքար մղած է որպէսզի ահաբեկչական չնկատուի:

Անոր հանգամանքին շուրջ տիրող շփոթ մթնոլորտին ներքեւ, Իրանի Դիմադրութեան Ազգային Խորհուրդը Ուաշինկթընի եւ ամերիկեան այլ քաղաքներու մէջ գրասենեակներ պահած է եւ յաճախ մանր խալթիներու ընթացքին դատապարտած է իրանեան կառավարութիւնը:

Ամերիկեան քայլը կը յաջորդէ Ֆրանսայի մէջ Մուճաիտին խալթի դէմ նման քայլերու: Յունիսիսի ոստիկանութիւնը Փարիզի մէկ արուարձանին մէջ անոր կեդրոնատեղիին վրայ յարձակած ու բազմաթիւ անդամներ ձերբակալած է:

Խմբակին ղեկավարը՝ Մարիամ Ռաճաւի եւ 16 ուրիշներ, երկու շաբաթ արգելափակուած են քաղաքական անարժեք կերպով ազատ արձակուած էին:

**ԱՂԱՐԱՒՈՐ ԾԻՆՆԵՐ ԿԸ ԲՈՂՈՔԵՆ...**

Ծարուճակուած Ա. Էջէն

ուր ամերիկեան ուժերուն վրայ յարձակումները առօրեայ հերթականութեամբ տեղի կ'ունենան, ամերիկեան բանակային կարաւաններ երեկ առաւօտուն երկու անգամ յարձակումի ենթարկուած են եւ ակնատեսներու համաձայն՝ վիրաւորներ արձանագրուած:

Օր մը առաջ, հարաւային Պարա քաղաքին մօտ բրիտանացի պիւնտար մը սպաննուած էր, երբ պիւնտարական հիւանդատար փոխադրակառք մը, որուն մէջ կը գտնուէր ան, ձերբահարուած էր: Երկու այլ պիւնտարներ վիրաւորուած են:

1 Մայիսին ի վեր, երբ պիւնտարական մեծ գործողութիւններու աւարտը յայտարարուած էր, 7 բրիտանացի եւ 61 ամերիկացի պիւնտար սպանուած են:

Ըստ բրիտանական պաշտպանութեան նախարարութեան, բրիտանացի այլ պիւնտար մը անկողիներին մէջ մեռած գտնուած է: Դէպքին շուրջ քննութիւնը բացուած է:

**ՄԱԿԻ ԱՊԱՇՏՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԸ**  
**Կ'ՈՂՋՈՒՆԵ ԱՌԺԱՏԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ**

Միւս կողմէ, ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը Հինգշաբթի օր ընդունած է բանաձեւ մը, որը շեշտեց Մ. Նահանգներու կողմէ կազմուած Իրաքի առժամեայ իշխանութիւնը, առանց սակայն վայն պաշտօնապէս որդեգրելու:

Ամերիկեան բանաձեւի նախագիծ մը կ'առաջարկէր, որ Ա. Խորհուրդի անդամները վայն որդեգրեն:

Չերոյի դէմ 14 քուէներով որդեգրուած բանաձեւը կ'ողջունէ Իրաքի իշխող խորհուրդը, վայն կարելու առաջին քայլ մը նկատելով՝ օրինական անկախ կառավարութեան մը կազմութեան համար:

Սուրիա, որ ձեռնպահ մնացած է, յայտնած է, թէ իր որոշումը այդ կ'արտացոլացնէ այս ամսուան սկիզբը կատարուած Արաբական Լիկայի յայտարարութիւնը, թէ անոր անդամները պիտի չձանչանան իշխող խորհուրդը:

Բանաձեւը Իրաքի վերակառուցման մէջ ՄԱԿի աւելի կարելու որդեգրութեան Առաքելութիւնը մը կը հաստատէ, ինչպէս խնդրած էր ընդհանուր քարտուղար Բոֆի Անան:

Ռուսիա երեկ ողջունած է Իրաքի գծով նորագոյն բանաձեւը ըսելով, թէ անիկա դէպի միջազգային ճանաչում ունեցող կառավարութեան մը կազմութեան առաջին քայլ մըն է:

(ԱՅՓ)

**ԹԱՅԼԷՆՏԻ ՄԷՉ**  
**ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԵԱՒ ...**

Ծարուճակուած Ա. Էջէն

ձամա Իսլամիա ցանցին ղեկավարն է, կը հետապնդուի Իստանբուլի, Մալեյզիոյ, Սինկափուրի եւ Ֆիլիպիններու մէջ՝ շաբթ մը ձերբահարումներու կապակցութեամբ:

**ԱՍԵՐԻԿԱՑԻ, ԱՍԻԱՑԻ ԴԵԿԱԿԱՐՆԵՐ**  
**Կ'ՈՂՋՈՒՆԵ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ**

Համապիլի ձերբակալութիւնը երեկ ողջունեցին ամերիկացի եւ ասիացի ղեկավարներ:

Մ. Նահանգներու նախագահ Ճորժ Պուշ ողջունած է «աշխարհի ամէնէն մահացու ահաբեկիչներէն մէկուն» ձերբակալութիւնը, ըսելով, որ ան 11 Սեպտեմբերի ուղեղներէն խալթու շէյխ Մոհամետի գործակիցներէն է:

Ասիա-խաղաղականի շրջանի ղեկավարներ նոյնպէս գոհունակութիւն արտայայտած են:

Աւստրալիոյ վարչապետ Ճոն Հաուրտը Համապիլի Պալիի Հոկտեմբեր 2002ի յարձակումին գլխաւոր ուղեղը նկատած է, ըսելով, որ ան «Քալիտա»ի եւ ձամա Իսլամիայի միջեւ գլխաւոր կապն է:

Ֆիլիպիններու իշխանութիւնները նոյնպէս ողջունած են ձերբակալութիւնը, յայտնելով, որ Համապիլի ահաբեկչական յարձակումներու ամբաստանութեամբ Մանիլայի մէջ պէտք է դատուի:

Արտաքին գործոց նախարար Պլաս Օփըլ ըսած է, թէ Համապիլի Ֆիլիպիններու կողմէ պահանջուած է Դեկտեմբեր 2000ին տեղի ունեցած շաբթ մը ձերբահարումներու համար, որոնք 22 զոհ խլած են:

Մինչ այդ, Սինկափուրի ապահովութեան հարցերու նախարար Թոնի Թան զգուշացուցած է, թէ մինչ Համապիլի ձերբակալութիւնը «կարելուր յառաջդիմութիւն մըն է» ահաբեկչութեան դէմ պատերազմին մէջ, պատերազմը վերջ է գտած եւ պետութիւնը կը գիտակցի, որ ահաբեկչական հաւանական յարձակում մը կրնայ տակաւին դիմագրաւել:

Չինաստան նոյնպէս ողջունած է ձերբակալութիւնը, շեշտելով, թէ Կորեայի կը կանգնի ահաբեկչութեան դէմ «վճռական ճիգերով»:

(ԱՅՓ)